

ՊԱՅՊԱՆՈՂԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ **Մարիամ Մարգարյան**

1. ՊԱՅՊԱՆՈՂԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՐԱԿԱՆ ՆԿԱՐԱԳԻՐԸ

Ընդհանրապես՝ «պահպանողականություն» (կոնսերվատիզմ) հասկացությունը մեկնաբանվում է չորս տարբերակներով.

1. Որպես խառնվածքի տեսակ, որի տարրերն են սովորույթը, մտահոգությունը արմատական փոփոխությունների նկատմամբ եւ իներցիան:

2. Որոշակի իրավիճակներում դրսեւորվող սոցիալական վարքի մոդել, որին հատուկ է հակազդեցությունը կամ դիմադրությունը սոցիալական, տնտեսական, կրոնական, քաղաքական, մշակութային եւ այլ ոլորտներում կատարվող փոփոխություններին:

3. Քաղաքական պահպանողականություն, որն իրենից ներկայացնում է կուսակցությունների եւ շարժումների կողմից իրականացվող ավելի շատ պաշտպանական, քան հարձակողական բնույթի գործողություններ, որոնց հատուկ է ավանդականությունը:

4. Գոյություն ունեցող կարգերի պահպանմանն ուղղված մտածողություն, որը հանդես է գալիս աշխարհայացքային կերպով:

Պահպանողականության պատմությունը սկսվում է 1789թ. Ֆրանսիական մեծ հեղափոխությունից: Այդ ժամանակներից սկիզբ են առնում պահպանողականության երկու դասական մոտեցումները: Առաջինի հիմքը դրել են Ժ. դե Մեստրը (1753-1821) եւ Լ. դե Բոնալդը (1754-1840), իսկ երկրորդը կապված է անգլիացի Է.Բերքի (1729-1797) անվան հետ: Եթե անգլոսաքսոնյան երկրներում առավել տարածված է պահպանողականության բերքյան տարբերակը, ապա մայրցամաքային Եվրոպայի երկրներում՝ դրանց յուրահատուկ համադրույթը:

«Կոնսերվատիզմ» հասկացությունն առաջին անգամ քաղաքական բառարան մտավ որպես լուսավորության գաղափարների եւ 1789թ. Ֆրանսիական հեղափոխության նկատմամբ ֆեոդալների եւ ազնվականների կողմից հակադարձվող արձագանքի արտահայտություն:

Առաջին անգամ «կոնսերվատիզմ» տերմինն օգտագործեց ֆրանսիական գրող եւ քաղաքական գործիչ Ֆ. Շատոբրիանը: 1815 թվականից իր

կողմից հրատարակվող ամսագիրը Շատոբրիանը կոչեց «Կոնսերվատոր» եւ, հարելով պահպանողական գաղափարների, կարելուր խնդիր համարեց Բուրբոնների դինաստիայի վերականգնումը:

Եվրոպական լուսավորության եւ Ֆրանսիական հեղափոխության կողմից առաջ քաշվող անհատականության, առաջընթացի եւ ռացիոնալիզմի գաղափարներին պահպանողականության հիմնադիրները հակադրեցին պետական իշխանության, մասնավորապես թագավորական իշխանության՝ աստվածային բնույթի մասին գաղափարը:

Պահպանողականության կարելուրագույն հասկացություններից է «բնական արիստոկրատիան», որի մեջ, ըստ Բերքի, ընդգրկվում են ոչ միայն ազնվականները, այլ նաեւ հարուստ գործարարները, կրթված անձինք, գիտնականները, դերասանները եւ այլն: Հեղափոխական «անհեթեթություններից» խուսափելու համար, ըստ Բերքի, պետությունը ղեկավարելու իրավունքը պատկանում է ազնվականությանը (ոչ միայն փողով), այլ ոչ թե «սափրիչներին»: Մարդկանց մտավոր եւ ֆիզիկական զարգացման աստիճանների բնական անհավասարությունը պահպանողականությունը համարում է քաղաքականության աքսիոմ:

Այդ ժամանակաշրջանին է վերաբերվում նաեւ պետության օրգանական տեսության մշակումը: Համաձայն դրա, պետությունը համեմատվում է անհատներից անկախ գոյություն ունեցող եւ նրանց վրա իշխող էակի հետ:

Պահպանողականության փիլիսոփայության ելակետն է այն դրույթը, ըստ որի մարդու ճակատագրի վրա իր հետքն է թողել նրա «առաջին մեղքը»: Մարդը չի գիտակցում «լավի» եւ «վատի» միջեւ տարբերությունները: Նա ոչ միայն ընդունակ չէ վերափոխել հասարակական կյանքն, այլ նաեւ չպետք է ձգտի դրան: Այդ ձգտումը պահպանողականները համարում են բռնության գործադրում հասարակական զարգացման բնական օրինաչափությունների նկատմամբ: 20-րդ դարի հայտնի պահպանողական Ռ.Կերկը գտնում էր, որ մարդու էությանը պատճառած մեծ վնասվածքների հետեւանքով հնարավոր չէ աշխարհը վերափոխել նրա իսկ քաղաքական գործունեությամբ: Անհատն, ըստ պահպանողականների, ինքնուրույն կերպով արժեք չի ներկայացնում եւ ամբողջությամբ կախված է պահպանողական կարգ ու կանոնի օժանդակությունից: Պահպանողականների կարծիքով, քաղաքական սկզբունքները պետք է հարմարեցնել ազգային ավանդություններին, սովորույթներին եւ հասարակական-քաղաքական ինստիտուտների արդեն արմատավորված ձեւերին: Բերքի խոսքերով, հասարակության նպատակն է ոչ թե թվացող ազատությունների հորինումը, որը հանգեցնում է հանընդհանուր անարխիայի, այլ արդեն գոյություն ունեցող, ավանդությունների վրա հիմնված

ազատությունների պահպանումը: Պահպանողականների կարծիքով, նախապատվությունը պետք է տալ ոչ թե անգամ կատարյալ թվացող տեսական սխեմաներին, այլ գոյություն ունեցող ինստիտուտներին: Նրանք գտնում էին, որ բնական եւ օրինական է համարվում միայն այն հասարակությունը, որը հիմնված է հստակ ձեւավորված աստիճանակարգության (հիերարխիա) վրա: Վերջինը կոչված է ապահովելու հասարակական օրգանիզմի ամբողջականությունն ու կենսունակությունը:

Պահպանողականության հիմնաքարերից է կրոնի քաղաքական դերի բարձրացման մասին գաղափարը: Քաղաքական եւ հոգեւոր ոլորտների հավասարակշռության հաստատումը Մեստրը հնարավոր էր համարում միայն թեոկրատական մոտեցման կիրառման դեպքում: Բռնալիզը, առաջնությունը չտալով ո՛չ աշխարհիկ, ո՛չ էլ հոգեւոր իշխանությանը, առաջ քաշեց քաղաքական եւ կրոնական ոլորտների դաշինք ստեղծելու գաղափարը:

Ի տարբերություն լիբերալիզմի ու սոցիալիզմի, որոնք ձեւավորվել են որպես համապատասխանաբար բուրժուազիայի եւ բանվոր դասակարգի գաղափարաքաղաքական հոսանքներ, պահպանողականությունն ավելի բարդ երեւոյթ է: Նա արտահայտում է այն դասակարգերի, ֆրակցիաների եւ սոցիալական խմբերի գաղափարներն ու կողմնորոշումները, որոնց համար պատմական եւ սոցիալ-տնտեսական զարգացման օբյեկտիվ միտումները (հասարակական փոփոխությունները) որոշակի սպառնալիք են պարունակում: «Պահպանողականություն» հասկացությունն ընդգրկում է հասարակության մեջ արմատավորված, ժամանակի փորձություններով անցած այն արժեքները, որոնք պայմանավորում են բնակչության զգալի հատվածների հոգեբանությունն ու մտածելակերպը:

Պահպանողական արժեքներն ու նորմերն իրենց համախոհներն են գտնում մարդկանց տարբեր խմբերում: Այսպես, պահպանողականությանը կարող են հարել ֆերմերների, խանութպանների, արհեստավորների եւ գյուղական բնակչության այն ներկայացուցիչները, որոնք մտահոգված են անորոշ ապագայի հեռանկարով եւ իրենց սոցիալական կարգավիճակը չեն ցանկանում փոխել հեղափոխությամբ, որը քայքայում է քաղաքական կարգը: Այս առումով պահպանողականությունը հանդես է գալիս դասակարգային եւությունից զուրկ՝ կրոնական, սոցիալական փիլիսոփայության տեսքով:

Պահպանողականության իմացաբանական նախադրյալն է այն հանգամանքը, որ հասարակական-քաղաքական գործընթացն ունի երկակի բնույթ: Դրա հիմքում մի կողմից ընկած է էվոլյուցիան՝ հնի հետ

կապերի խզումը եւ նորի ստեղծումը, իսկ մյուս կողմից՝ նախկին համակարգի կենսունակ տարրերի փոխանցումը նորին: Պատմական փորձը ցույց է տալիս, որ անգամ արմատական սոցիալական հեղափոխությունները (ֆրանսիական եւ ռուսական) պահպանեցին ազգային ավանդությունների, սովորույթների զգալի մասը, որը կազմում էր ազգային գիտակցության հիմքը: Ինչպես գրում է բրիտանացի տեսաբան Գեյլերը՝ «19-րդ եւ 20-րդ դարերի մարդը ոչ թե ուղղակի ինդուստրալիզացվեց, այլ ինդուստրալիզացվեց որպես գերմանացի, ռուս կամ ճապոնացի...»:

Պատմությունը արդեն գոյացածի եւ դրան զուգահեռ առաջացող տարրերի միասնությունն է: Պահպանողականներն այդ երկու գործընթացներից նախապատվությունը տալիս են առաջինին: Պահպանողականությունն ընդունում է իրականությունը՝ հիմնական շեշտը դնելով ավանդական կանոնների, նորմերի, սոցիալական եւ քաղաքական կառուցվածքների ու ինստիտուտների պահպանման անհրաժեշտության վրա:

Պահպանողականների ավանդական վերաբերմունքը դրսևորվում է նաեւ բարեփոխումների անցկացման հարցում: Դրա համաձայն՝ բոլոր բարեփոխումներն ու փոփոխությունները չպետք է խախտեն բնականոն զարգացման ընթացքը, այլ ուղիներ պետք է մշակեն արդիականացման համար: Այդ կապակցությամբ, պահպանողականությունը բարեփոխումները բաժանում է երկու խմբի՝

1. Ավանդական իրավունքների եւ սկզբունքների վերականգնմանն ուղղված բարեփոխումներ:

2. Հեղափոխության կանխմանն ուղղված բարեփոխումներ:

Ընդ որում, հաճախ առանձնացվում են «բարեփոխում» եւ «վերափոխություն» հասկացությունները: Վերափոխումն, ըստ պահպանողականների, ձեւափոխում է օբյեկտի էությունը, իսկ բարեփոխումը, համարվելով անխուսափելի, չի դիպչում օբյեկտի արմատներին: Բարեփոխումը պահպանողականությունը գնահատում է որպես «անխուսափելի չարիք», որն անհրաժեշտ է անցկացնել «վերելից»՝ աստիճանաբար եւ առանց շտապողականության, այլ ոչ թե «ամբոխի մեթոդներով»՝ «ներքելից»:

19-րդ դ. երկրորդ կեսից պահպանողականության զարգացման հիմնական միտումը բնորոշվում է դրամատերերի եւ ազնվականության միջեւ կնքված դաշինքով: Դրա հետ մեկտեղ առաջ է գալիս պահպանողականների մի խումբ, որը ձգտում է ընդլայնել այդ գաղափարախոսության սոցիալական հիմքը՝ տարածելով այն գյուղացիների, արհեստավոր-

ների եւ առեւտրականների միջավայրում: Սոցիալական ուղղվածությամբ աչքի են ընկնում 1841-1846թթ. Անգլիայի պահպանողական կառավարության ղեկավար Ռ.Փիլի, Գերմանիայի կանցլեր Օթթո ֆոն Բիսմարկի բարեփոխումները: Նրանք համարում էին, որ պահպանողականներն ավելի հեշտությամբ կարող են հաղթահարել սոցիալական պրոբլեմները, քան լիբերալները: Սակայն սոցիալական քաղաքականությունն իրենց կողմից դիտվում էր ոչ թե որպես սոցիալական ապահովության համակարգի ստեղծում, այլ՝ պետության բարեգործություն: Այս ժամանակաշրջանում որոշ գաղափարների ընդունումով (ազատ շուկայական հարաբերություններ, ներկայացուցչական համակարգի զարգացում, իշխանության մարմինների ընտրություն, պառլամենտարիզմ, քաղաքական եւ գաղափարախոսական պլյուրալիզմ, անհատականության զարգացում եւ այլն) պահպանողականությունն ընդհուպ մոտեցավ դասական լիբերալիզմին:

Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո պահպանողականության միջազգային կենտրոնը Եվրոպայից տեղափոխվեց ԱՄՆ: Պահպանողականության զարգացման խնդիրն այստեղ իր վրա վերցրեց մտավորականների մի խումբ, որը պատկանելով ակադեմիական միջավայրին՝ սերտ կապերի մեջ էր գործարար աշխարհի ու քաղաքական ոլորտի գործիչների հետ: Այս խմբի մեջ էին մտնում ԱՄՆ ապագա պետքարտուղար Յ.Քիսինջերը, հայտնի քաղաքական գործիչ Ռ.Բաթլերը եւ ուրիշներ:

Ցանկանալով հաղթանակած դուրս գալ սառը պատերազմից եւ «ծախ» հեղափոխական ուժերի դեմ պայքարից՝ ամերիկյան պահպանողականները կրկին վեր հանեցին Է.Բերքի ժառանգությունը: Բավական տարածված դարձավ այն դրույթը, ըստ որի համաշխարհային հեղափոխության վտանգը պետք է հաղթահարել ոչ թե դիմելով ավելի ծախքայլերի կամ ծայրահեղ աջ հակազդեցության, այլ պահպանելով եւ ամրապնդելով արեւմտյան հասարակությունների ազատ հաստատությունները: Ըստ այդ գաղափարի կողմնակիցների, համաշխարհային հեղափոխությունից դուրս մնացած երկրներն ազատությունը պահպանելու ճանապարհով միայն կարող են մրցակցել ստեղծված ամբողջատիրական ռեժիմների հետ եւ թուլացնել դրանք:

Կոմունիզմի տարածման վտանգի առջեւ Բերքի կոնսերվատիզմը, լինելով ավելի ճկուն, հնարավորություն տվեց որոշակի շփման եզրեր գտնել լիբերալիզմի հետ: Դրանով հիմք դրվեց այդ երկու գաղափարախոսությունների հետագա համաձայնությանը:

Միաժամանակ, այս շրջանում է, որ պահպանողականներն ազատ

շուկայի պայմաններում ընդունեցին պետության կարգավորիչ դերի անհրաժեշտությունը, կոնկրետ պայմաններից ելնելով արդյունաբերության որոշ ճյուղերի ազգայնացման հնարավորությունը, սոցիալական սպասարկման ոլորտի ընդլայնման կարելիությունը, ինչպես նաև փորձեցին արդեն բանվոր դասակարգի միջոցով ընդլայնել պահպանողական կուսակցությունների սոցիալական հիմքը:

20-րդ դարի 70-ականներին բարձրացավ ավանդական կողմնորոշում ունեցող այս պահպանողականության դերը: Արեւմտյան գաղափարախոսության թեքումը դեպի այս տեղի ունեցավ ձախերի՝ կոմունիստների, սոցիալ-ժողովրդավարների եւ ձախ լիբերալների գաղափարախոսության ճգնաժամի պայմաններում: Դրա հիմնական պատճառը 1973-1974թթ. տնտեսական ճգնաժամն էր, որը պատրանքի վերածեց տնտեսական գործընթացների կարգավորման հնարավորության գաղափարը:

Այդ ժամանակաշրջանում Եվրոպայի մի շարք երկրներում առաջացան պահպանողական կուսակցություններ: Այն, որ բնակչության լայն զանգվածներն ընդունում էին պահպանողականության գաղափարներն ու սկզբունքները, վկայում են Ռ.Ռեյգանի հաղթանակները ԱՄՆ նախագահական ընտրություններում, Անգլիայի պահպանողական կուսակցության ղեկավար Մ.Թեյտչերի կառավարության երկարատեւ իշխանությունը, խորհրդարանական եւ տեղական իշխանության մարմինների ընտրությունների արդյունքները ԳՖՅ-ում, Իտալիայում, Ֆրանսիայում:

Ընդհանրապես, պահպանողականության կարելորագույն տարրերից է արմատական գաղափարախոսությունների եւ հասարակական տեսությունների նկատմամբ քննադատական վերաբերմունքը: Մատնանշելով պահպանողականների այդ մոտեցումը՝ քաղաքագետները նկատի ունեն այն, որ պահպանողականները արստրակտ սխեմաներին նախընտրում են պրագմատիզմը եւ կոմպրոմիսը: Նրանք դեմ են բոլոր տեսակի գաղափարախոսությունների բացարձակացմանը, հատկապես՝ գործնականում դրանք կուրորեն կիրառելուն:

Ժամանակակից պահպանողականության, հատկապես նրա այս թելի բնորոշ գծերից է հավատարմությունը կրոնական ավանդականությանը: Արդի հասարակության բացասական երեւույթների հիմնական պատճառը նրա կողմից ավանդական արժեքների անտեսումն էր, որոնցից կարելորագույնը կրոնական արժեքն էր: Պահպանողականության ներկայացուցիչների պնդումով, դրա թերագնահատումը ստիպեց հրաժարվել մարդու «սկզբնական մեղքի» հայեցակարգից եւ դիտել այն որպես «բոլոր երեւույթների չափանիշ»՝ ընդգծելով մարդու միայն բարի բնույթը: Քանի որ, ըստ պահպանողականների, միայն ֆիզիկական եւ

զգացմունքային աշխարհը համարվեց միակ իրականը, սկսվեց կրոնի անկումը եւ, դրան զուգահեռ, մատերիալիզմի եւ ռացիոնալիզմի ազդեցության աճը: Հանդես գալով ավանդականության վերականգնման օգտին՝ պահպանողականներն այդ գործընթացի միջանկյալ ինստիտուտներ են համարում ընտանիքը, համայնքը, եկեղեցին:

Սակայն ավանդական արժեքները ժամանակակից պահպանողականության կողմից տարբեր երկրներում մեկնաբանվում են տարբեր կերպ: Այսպես, ԱՄՆ պահպանողականների մեծամասնությունն իրեն համարում է բողոքական ֆունդամենտալիզմի կողմնակից, մոլեռանդ է եւ թշնամանքով է ընդունում այլախոհությունը: Որոշ արեւմտաեվրոպական երկրների պահպանողականներ հարում են այլ դիրքորոշման: Օրինակ, Գերմանիայի եւ Ֆրանսիայի շատ պահպանողականներ իրենց խնդիրը համարում են հնագույն Եվրոպայի ոգու վերածնունդը, որում միահյուսվել էին հունական, լատինական, կելտական, գերմանական եւ սլավոնական մշակույթները: Վերադարձը հնին դիտվում է որպես հեթանոսական Եվրոպայի արժեքների վերակենդանացում: Նրանց կարծիքով, քրիստոնեական մոնոթեիզմը հավասարեցնում է բոլոր հավատացյալներին, հեղափոխական երանգներ տալիս Եվրոպական գիտակցությանը: Հեթանոսությունը գայթակղում է իր պոլիթեիզմով, որը, պահպանողականների կարծիքով, հիմք է հանդիսանում պլյուրալիզմի համար:

Ի տարբերություն լիբերալների, որոնք մարդուն դիտում են որպես շղթայված, բայց ազատության արժանի էակ, պահպանողականները գտնում են, որ քաղաքացիական ազատությունները պետք է խարսխվեն հենց ավանդությունների եւ պատմական հաջորդականության շղթաների վրա: Պահպանողականների աչքում պետությունը օրենքի եւ բարոյականության պաշտպանն է: Առանց ուժեղ պետության՝ հասարակությունը կարող է հայտնվել անարխիայի գրկում: Սակայն ուժեղ պետությունը կարող է գործիք դառնալ անհատական ազատությունը ճնշելու համար: Այդ պատճառով պահպանողականության տեսաբաններն ընդգծում են մարդկանց ավելի փոքր միավորումների ձեւավորման կարելիությունը, որոնք կազմեն պետության վրա: Միաժամանակ, նրանց կարծիքով, հասարակական կազմակերպությունները չպետք է աչքի ընկնեն բարձր քաղաքական ակտիվությամբ եւ դրանով հակադրվեն կուսակցություններին կամ խորհրդարանին: Սակայն անհրաժեշտ է ընդլայնել այդ կազմակերպությունների լիազորություններն իրենց գործունեության ոլորտներում, որպեսզի տվյալ բնագավառները հնարավորինս զերծ մնան պետության միջամտությունից:

Ըստ պահպանողականների, մարդու իրավունքները կրում են

միաժամանակ բնական եւ սոցիալական բնույթ: Բնական՝ որովհետեւ մարդը ստեղծված է Աստծո կողմից որպես բնության կարելորագույն տարրերից մեկը եւ սոցիալական՝ որովհետեւ իր իրավունքները մարդը կարող է օգտագործել միայն կազմակերպված հասարակության շրջանակներում:

Այն դեպքում, երբ պահպանողականները կանգնում են անհատ կամ հասարակություն երկընտրանքի առջեւ, նրանք նախապատվությունը տալիս են երկրորդին: Նրանց կարծիքով, առանձին անհատի իրավունքները երաշխավորված են այնքանով, որքանով որ նա պատկանում է այս կամ այն (պատմական, էթնիկական եւ այլն) հանրության:

(Շարունակելի)

**ՊԱՅՊԱՆՈՂԱԿԱՆՈՒԹՅԱՆ
ՆՈՐ ՎԵՐԵԼԸԸ ԵՎՐՈՊԱՅՈՒՄ
Սուրեն Սարյան**

Այսօր Եվրոպայում, լիբերալ-դեմոկրատական համակարգի ճգնաժամի եւ ձախ գաղափարների վարկաբեկման պայմաններում, լուրջ վերելք է ապրում աջ պահպանողականությունը:

Գոյություն ունեն մի քանի պատճառներ, որոնք դրդում են Եվրոպացի ընտրողներին քվեարկել այսօր աջ պահպանողականների օգտին: Ռա եւ անվստահությունն է ներկայիս կառավարող վերնախավի նկատմամբ, եւ մահմեդականների ու ընդհանրապես օտարների ներգաղթի կտրուկ աճը. նրանք չեն ընդունում նաեւ Եվրաշինարարության նախագիծը, որն այնքան ակտիվորեն առաջ են մղում ձախերն ու ազատականները:

Եվրոպայի աջ պահպանողական ուժերը հատկապես սկսեցին նոր թափ հավաքել Ֆրանսիայում եւ Նիդեռլանդներում Եվրոպական սահմանադրության մերժումից հետո: Էթնոսոցիալական հուզումները Ֆրանսիայում, «ծաղրանկարային պատերազմը» եւ Հռոմի պապի վերջերս տեղի ունեցած ելույթի առթիվ մահմեդականների արձագանքը միայն ուժեղացրին պահպանողականների դիրքերը Եվրոպացիների քաղաքական գիտակցության մեջ:

Վերջին ճգնաժամերը Հունգարիայում եւ Լեհաստանում եւս ստիպեցին վերհիշել Կենտրոնական ու Արեւելյան Եվրոպայում աջ կուսակցությունների գոյության մասին:

Այսօր Կենտրոնական Եվրոպայի երկրներում գործում են Եվրոպական միասնականացմանը հակադրելու եւ ազգային-կրոնական արժեքների պահպանմանն ուղղված տրամադրությունները: Բացի այդ, չեն վերացել եւ գտնվում են կիսամար վիճակում ազգայնական տրամադրությունները, եւ եթե այդ տրամադրություններին նոր զարկ տրվի, ապա չեն բացառվում լուրջ բախումներ տարածքային վերաբաժանումների համար:

Այսպես, Լեհաստանում, ինչպես հայտնի է, 2005թ. ընտրությունների արդյունքում իշխանության եկավ պահպանողական «Իրավունք եւ արդարություն» կուսակցությունը: Այդ կուսակցությունը եւ նրա դաշնակիցները հանդես են գալիս ազգային եւ քրիստոնեական-կաթոլիկ ավանդույթների վրա կառուցված նոր Լեհաստանի կամ Չորրորդ հանրապետության օգտին: Նրանք պաշտպանում են նաեւ Գերմանիայում,

Լիտվայում եւ Բելառուսում բնակվող լեհական փոքրամասնությունների շահերը՝ պահանջելով տրամադրել նրանց քաղաքական ազատության եւ ներկայացուցչության իրավունքներ:

Չեխիայում նույնպես ուժեղ են նախկինում ազատական, իսկ այսօր արդեն ազգայնական եւ պահպանողական դիրքեր գրաված «Քաղաքացիական ժողովրդավարական հենքի» դիրքերը, որի առաջնորդ Վացլավ Կլաուսը Չեխիայի նախագահն է եւ հայտնի է եվրոպական միավորման նկատմամբ իր հոռետեսական հայացքներով՝ ամենեւին չողջունելով ազգային պետությունների իրավասությունների եւ գործառույթների նվազեցումը եւ դրանց փոխանցումը Բրյուսելում տեղակայված վերազգային կենտրոնին: Այդ կուսակցությունը հանդես է գալիս եվրոպական սահմանադրության վավերացման դեմ եւ ազգային ինքնիշխանության պահպանման ու ազգային կողմնորոշում ունեցող շուկայի, մշակույթի եւ կրթության զարգացման օգտին: Այս տարի կայացած Չեխիայի խորհրդարանական ընտրություններում հենց ԶԴՊ-ն գրավեց առաջին տեղը:

Տեղաշարժը դեպի աջ պահպանողական թեւ կատարվեց նաեւ Յունգարիայում, որտեղ իշխող սոցիալիստները թեւ պահպանեցին իշխանությունը, սակայն վերջին սկանդալային պատմությունների եւ Բուդապեշտում տեղի ունեցած հուզումների հետեւանքով այնտեղ կտրուկ ուժեղացան աջերի դիրքերը: Այդ թեւն առաջնորդող «Ֆիդես» կուսակցությունը համագործակցում է անգամ ազգային-ռեւանչիստական ուժերի հետ, որոնք խոսում են մինչեւ Ավստրո-հունգարական կայսրության փլուզումը Յունգարիային պատկանող, իսկ այսօր Սերբիայի, Սլովակիայի եւ Ռումինիայի հսկողության տակ գտնվող տարածքները վերադարձնելու մասին: Ամեն դեպքում, այսօր «Ֆիդեսը» վայելում է երկրի բնակչության մեծամասնության աջակցությունը:

Ռումինիայում եւս ուժեղ են «Մեծ Ռումինիա» աջ պահպանողական կուսակցության դիրքերը, որը վերջին ընտրությունների ժամանակ գրավեց երրորդ տեղը:

Այսպիսով, ամբողջ Եվրոպայի եւ, մասնավորապես, նրա կենտրոնական ու արեւելյան հատվածի համար առկա է որոշակի միտում. պահպանողական կուսակցությունների դիրքերի ուժեղացում եւ նրանց հետ համատեղ՝ արմատական աջ կազմակերպությունների մուտքը քաղաքականություն:

Կենտրոնական եւ Արեւելյան Եվրոպայի երկրների պահպանողականները փորձելու են մեծացնել իրենց ազդեցությունը՝ առաջ քաշելով նպատակային ազգային ծրագրեր, որոնք չեն համընկնում ԵՄ ձախական եւ լիբերալիստական կարծրատիպերի հետ: Այդ քաղաքականությունը

հենվելու է ավանդական արժեքների վրա՝ ընտանիք, կրոն եւ ազգայնականություն:

Ձախերի եւ ազատականների քաղաքականության հետեւանքով այսօրվա Եվրոպայում խորանում է անջրպետն ինչպես իշխող վերնախավի եւ հասարակության, այնպես էլ տեղացի բնակչության եւ ներգաղթյալների միջեւ: Այդ պատճառով առաջացել է նոր քաղաքականության պահանջարկ, որը կապահովի եվրոպական ավանդական եւ քաղաքակրթական իրողությունների պաշտպանությունը:

Եվրոպական նեոպահպանողականությունն ուշադրություն է դարձնում արժեքային համակարգի կայացման ու տարածման խնդիրներին: Աջերի գաղափարները Եվրոպայում փոխակերպում են ապրում: Եթե 1980-ականներին եվրոպական պահպանողականությունն ընդունեց ազատ շուկայի եւ բաց հասարակության լիբերալ արժեքները, ապա այսօր պայքար է գնում աջ պահպանողական գաղափարախոսության ներսում՝ քրիստոնեական եւ աշխարհիկ արժեքների միջեւ, որոնք երկուսն էլ հավակնում են ներկայացնել արդի եվրոպական ինքնությունը: Բացի այդ, աջ հոսանքի ներկայացուցիչներն իրենց ծրագրերում եւ քաղաքականության մեջ հռչակում են ազգային ավանդույթների առաջնայնությունը՝ շեշտը դնելով ազգային պետականությունների եւ նրանց ինքնիշխանության ապահովման վրա:

Այսօր նոր պահպանողականները գտնվում են ուժեղ գաղափարական դիմակայության մեջ արեւմտյան քաղաքակրթության ներկայիս հիմնական միտումների հետ, որոնք հանգում են եվրոպական քաղաքակրթության հիմնարար արժեքների համար օտար՝ այլադավանների, միասեռականների եւ այլ տեսակի «այլերի» գործունեության նկատմամբ բոլոր սահմանափակումների վերացմանը՝ քրիստոնեական կամ պահպանողական արժեքների քարոզչությունը համարելով անհանդուրժողականության կամ ծայրահեղականության դրսեւորումներ (մինչդեռ այդ ուղեգիծն ինքն է դառնում ազատական արմատականություն Եվրոպայի համար): Եթե Նիդեռլանդներում գրանցված «արվամուլների կուսակցությունը», Բելգիայում կամ Շվեյցարիայում իսլամիստական արմատականների կենտրոնները չեն առաջացնում ծայրահեղականության մեղադրանքներ, ապա, օրինակ, Լը Պենի, Յայդերի, Կաչինսկի եղբայրների կուսակցությունները, որոնք կոչ են անում պահպանել ընտանիքը, քրիստոնեական հավատը եւ ազգային ինքնիշխանությունը, բնորոշվում են իբրեւ «ծայրահեղական»:

Օրինակ, բելգիական «Ֆլամանդական շահ» աջ կուսակցությունն ուղղակի մեղադրվում է ռասիստական գաղափարների քարոզչության մեջ: Մինչդեռ այդ քաղաքական ուժը կոչ է անում վտարել Բելգիայից

աշխատազուրկ մահմեդականներին եւ զրկել իսլամը պետության կողմից հովանավորվող կրոնի կարգավիճակից, քանի որ, կուսակցության առաջնորդ Ֆիլիպ Դեւինտերի խոսքերով՝ «*իսլամն օտար է մայրցամաքի բնակիչների համար եւ սպառնում է նրանց*»:

Եվրոպացի նոր պահպանողականներն ընդամենը ասում են, որ այն պայմաններում, երբ աշխարհի մնացած միլիարդավոր մարդիկ չեն անցել քաղաքակրթության այն դպրոցը, ինչ եվրոպացիները, իրենց արյամբ ու քրտինքով չեն ստեղծել այն, ինչ ստեղծել են եվրոպացիները, երբ այդ միլիարդներն ունեն այլ մտածելակերպ եւ արժեքային կողմնորոշումներ, այլ ավանդույթներ ու պատկերացումներ կյանքի մասին, որեւէ իմաստ չկա խոսելու հավասար իրավունքների եւ ազատությունների մասին:

Նեոպահպանողականների համար պետականության եւ ազգային ինքնության հարցերում զիջումներն անընդունելի են. նրանք ջանում են համադրել դրանք անհատի ազատության գաղափարի հետ: Մինչդեռ, ծախերի համար առաջնային է արդարությունը, ազատականների համար՝ ազատությունը, եւ եթե հանուն դրանց պետք է գնալ ազգային ինքնությունների, կոնկրետ երկրի կամ ամբողջ աշխարհամասի հիմնարար արժեքային համակարգի հարցերում զիջումների, ապա նրանք դա կանեն:

Նեոպահպանողականները հստակ հայտարարում են, որ ռասաների եւ քաղաքակրթությունների խառնուրդը, որը փորձում են ստեղծել ծախերն ու ազատականները, կբերի միայն քաղաքակրթության վախճանին: Եվ գոյություն չունեն համամարդկային ընդհանրական արժեքներ, այլ կան այս կամ այն քաղաքակրթական հատվածին բնորոշ արժեքներ, որտեղ մեկը ճանաչում է որպես գերագույն արժեք ազատությունը, իսկ մյուսը՝ հնազանդությունը:

Նման բաների մասին բարձրաձայն խոսելը ժամանակակից եվրոպայում համարվում է «ռասիզմ» եւ «ծայրահեղականություն»: Բանն այն է, որ արդի եվրոպական քաղաքական համակարգը ստեղծվել է ազատական եւ ծախ քաղաքական ուժերի ու գաղափարախոսությունների ջանքերով, իսկ պահպանողականները՝ իրենց «Աստված-հասարակություն-մարդ» եռանկյունով օտար են եղել այդ համակարգին: Սակայն այսօրվա համապարփակ ճգնաժամը նեոպահպանողականությանը տալիս է իրեն դրսեւորելու հնարավորություն: Ահաբեկչության սպառնալիքը, «երրորդ աշխարհի» երկրներից ներգաղթի ծավալների աճը, տնտեսական բարեկեցության ակնհայտ դանդաղեցումը, արեւմտյան ժողովրդավարության հաղթարշավի արգելակումը, այս ամենը եվրոպացիների մոտ առաջացնում է նոր, ավելի ճիշտ՝ լավ մոռացված հին արժեքների եւ սկզբունքների պահանջ:

Փաստորեն, Եվրոպայի գալիք քաղաքական բաժանումն ընթանալու է այլեւս ոչ թե դասական աջ ու ձախ կատեգորիաների, սոցիալական արդարության եւ ազատական հարաբերությունների կողմնակիցների միջեւ, այլ ազգային (նույնիսկ կրոնական) եւ քաղաքակրթական ինքնությունների առանցքների շուրջ համախմբված կամ դրանց դիմակայող ուժերի միջեւ:

Դրա մասին է վկայում այն, որ Եվրոպայի նոր պահպանողականները ներկայացնում են իրենց որպես դեպի բուն եվրոպական արժեքային համակարգը կողմնորոշված՝ ազգային, քրիստոնեական եւ սոցիալական հենքերի վրա կազմավորված քաղաքական ուժեր: Այդ ուժերի նպատակներն են հռչակվում ազգի բնական վերարտադրման մեխանիզմների ապահովումը, պետականության եւ ազգի հոգեւոր ու բնապահպանական միջավայրերի պահպանումը: Նրանք դեմ են նաեւ Եվրոպայում կենտրոնացված վերազգային գերպետության ստեղծմանը, քանի որ դա կխաթարի ազգային ինքնիշխանությունը՝ հանդես գալով ազգային ինքնությունների բազմազանության հիմքի վրա կառուցված եվրոպական ժողովուրդների դաշինքի ստեղծման օգտին: Այսինքն՝ եվրոպացի նեոպահպանողականները խոսում են «Ազգերի Եվրոպայի»՝ տարբեր ազգային ինքնիշխանությունների եւ պետությունների միավորման մասին, որը տեղի է ունենում ընդհանուր հոգեւոր եւ մշակութային դաշտի՝ «քրիստոնեական արժեհամակարգի» հիմքի վրա:

Չատկանշական է, որ ավանդապես ձախական երկիր համարվող Ֆրանսիայում անգամ հասունանում է նոր պահպանողականության պահը: Այստեղ այդ հոսանքի մարմնավորում է հանդիսանում ոչ միայն Լը Պենի «Ազգային ճակատը, այլեւ դրգուլական «Միավորում հանրապետության համար» կուսակցությունը, որը երկար ժամանակ առաջնորդել է նախագահ ժակ Շիրակը: Այն այսօր գլխավորում է Ֆրանսիայի առավել խարիզմատիկ առաջնորդներից մեկը՝ ՆԳ նախարար Նիկոլա Սարկոզին, որը խորհրդանշում է ֆրանսիական եւ եվրոպական պահպանողականների նոր տեսակը՝ ակտիվ, հանրության հետ իր լեզվով խոսող, երբեմն քաղաքական կոռեկտության դոգմաները խախտող, ապագայի վերաբերյալ որոշակի տեսություն ունեցող եւ ՋԼՄ-ից օգտվելու ունակ գործիչ:

Այսպիսով, Եվրոպայում տեղի է ունենում աջ թեւի արագ հզորացում, քանի որ էթնոկրոնական խնդիրները ժամանակակից Եվրոպայում եւ ամբողջ աշխարհում գնալով առաջնային տեղ են գրավում սոցիալ-տնտեսական խնդիրների համեմատությամբ: Ու թեւեւ քաղաքագետների մեծ մասը պնդում է, թե ներկայիս արմատական պահպանողական ալիքը ժամանակավոր է եւ ի վերջո կտարրալուծվի ավելի չափավորական աջ

հոսանքի մեջ, սակայն որոշ վերլուծաբաններ կարծում են, թե այդ ալիքը մոտ ապագայում դառնալու է գերիշխող եվրոպական քաղաքականության մեջ:

Նոր պահպանողականները չեն հոգնում կրկնել, որ լիբերալ աշխարհիկ համակարգն ունակ չէ դիմակայել Եվրոպայի ապաեվրոպականացմանը, որը բերում է այլասերվածության եւ անկումային միտումների հաղթանակին: Միաժամանակ, նոր պահպանողականությունը չի կարող պայքարել «հին» եվրոպական քաղաքակրթության պահպանման համար, դա գործնականում անհնար է: Այն կոչված պետք է լինի տալ Եվրոպային իրականում նոր դեմք, որը մենք դեռ չենք ճանաչում, ինչպես չէին ճանաչի այսօրվա Եվրոպան միջնադարի կամ նապոլեոնյան դարաշրջանի մարդիկ:

ՆԱՏՕ-Ի ԳՈՐԾՈՆԸ

Փազիկ Տեր-Չարությունյան

Ռազմական-քաղաքական դաշինքների հետ հարաբերությունների կառուցումը, հաշվի առնելով ներկայիս քաղաքական գործընթացների փոփոխական դինամիկան, ՀՀ ազգային անվտանգության կարելորագույն խնդիրներից է: Ինչպես հայտնի է, այդ ոլորտում հիմնական շեշտադրումներն արված են Ռուսաստանի հետ ռազմավարական համագործակցության վրա: Սակայն ՀՀ–ՌԴ համագործակցությունը, ինչպես եւ մասնակցությունը Հավաքական անվտանգության պայմանագրի կազմակերպությանը (ՀԱՊԿ), հաշվի առնելով առաջինի բազմաշերտ քաղաքականությունը եւ երկրորդի դեռեւս լիովին կայացած չլինելը, չեն կարող միանշանակ երաշխիքներ հանդիսանալ ՀՀ անվտանգության համար:

Վերոնշյալի համատեքստում բնորոշ է ՀՀ ՁՈւ Գլխավոր շտաբի պետի հայտարարությունը վերջերս Սոսկվայում կայացած ՀԱՊԿ անդամ երկրների ԳՇ պետերի խորհրդակցության ժամանակ. նա դժգոհություն էր հայտնել ՀԱՊԿ անդամ երկրների կողմից այլ երկրներին (նկատի ունենալով Ադրբեյջանին) տրվող ռազմական աջակցության առիթով: Ավելացնենք, որ ՀՀ-ի նկատմամբ դաշնակցային պարտավորությունները հաճախակի խախտվում են նաեւ ՄԱԿ-ում ընթացող քվեարկությունների ժամանակ:

Նկատենք, որ ՀՀ քաղաքական ընտրանու «Եվրասիական-Արեւելյան» կողմնորոշում ունեցողների շրջանակում այսօր հնչում են կարծիքներ, թե ՀՀ անվտանգության երաշխիք կարող է հանդիսանալ Շանհայի համագործակցության կազմակերպության (ՇՀԿ) անդամագրվելը: Հատկանշական է, որ ոչ պաշտոնական հարթությունում այդ տեսակետն են պաշտպանում նաեւ Իրանի որոշ պաշտոնատարներ: Սակայն նույն Իրանը, չնայած լիարժեք անդամ դառնալու մեծ ջանքերին, ՇՀԿ-ում ունի ընդամենը դիտորդի կարգավիճակ: Ավելի քան կարելորելով ՀՀ–Չինաստան եւ այդ հարթությունում ՀՀ–ՇՀԿ հարաբերությունները՝ պետք է, սակայն, փաստել, որ ՇՀԿ-ն դեռեւս հեռու է որպես ռազմաքաղաքական դաշինք կայացած լինելուց: Նշենք նաեւ, որ ՇՀԿ-ն իր առաջնահերթ խնդիրները տեսնում է Կենտրոնական Ասիայում, որտեղ կոշտ մրցակցային պայքար է ընթանում ՇՀԿ անդամ երկրների եւ ԱՄՆ-ի ու նրա դաշնակիցների միջեւ:

Վերջին ժամանակներս ինտենսիվ տեղեկատվական շրջանառության մեջ է դրվել նաև ՀՀ-ՆԱՏՕ հարաբերությունների խնդիրը: Դա գլխավորապես կապված է ռուս-վրացական զարգացումների համատեքստում՝ Վրաստանի ՆԱՏՕ ընդունվելու հնարավորության, ինչպես նաև ԼՂՀ կարգավորման վերաբերյալ տարածաշրջան այցելած ՆԱՏՕ պաշտոնատարների հայտարարությունների հետ (հիշենք Ռոբերտ Սիմոնսի խոսքերը, թե ՆԱՏՕ-ն կարող է ստանձնել այդ խնդրի շուրջ ընդունված որոշումների կատարումը): Երեւանում ՆԱՏՕ-ի տեղեկատվական կենտրոնի բացումն, իր հերթին, լրացուցիչ մեծացնելու է այդ կազմակերպության ներկայությունը ՀՀ-ում: Այսօր ՀՀ-ՆԱՏՕ հարաբերությունները, ինչպես հայտնի է, կարգավորվում են Անհատական գործընկերության գործողության ծրագրի (IPAP) շրջանակներում: Գաղտնիք չէ նաև, որ ազատական քաղաքական ուժերը որպես ՀՀ անվտանգության երաշխիք տեսնում են Հյուսիսատլանտյան դաշինքը՝ այն հիմնավորմամբ, որ ներկայումս այդ դաշինքը ամենահզորն է աշխարհում (այսօր ՆԱՏՕ-ի անդամ երկրների ընդհանուր ՀՆԱ-ն կազմում է \$ 25.9 տրլն, ռազմական բյուջեն՝ \$ 768 մլրդ, իսկ բնակչությունը՝ 866 մլն: Համեմատության համար նշենք ՀԱՊԿ-ի համապատասխան տվյալները. ՀՆԱ՝ \$1.86 տրլն, ռազմական բյուջեն՝ \$24.9 մլրդ, բնակչությունը՝ 211 մլն):

Սակայն հայտնի է նաև, որ ՆԱՏՕ-ն (չնայած ԽՍՀՄ կազմալուծումից հետո ձեռք բերած ակնհայտ հաջողություններին) ունի իր սեփական հիմնախնդիրները եւ ներկայումս գտնվում է ոչ միանշանակ բարվոք վիճակում:

ՆԱՏՕ-ի ձեւաչափը ստեղծվել է որպես սառը պատերազմի խորհրդանիշ, «երկբեւեռ»՝ ԱՄՆ-ԽՍՀՄ (կամ ավելի ընդհանուր՝ Արեւմուտք – Արեւելք) հակամարտության ռազմական խնդիրները լուծելու համար: Ներկայումս, երբ Արեւմուտք եւ Արեւելք հասկացությունները կորցրել են իրենց՝ նախկինում միասնական աշխարհագրափարափոսական եւ աշխարհաքաղաքական բովանդակությունները, ՆԱՏՕ-ի առջև վերափոխման (տրանսֆորմացիայի) լուրջ խնդիրներ են ծագել: Հատկանշական է, որ 90-ականների սկզբին որոշ ամերիկյան քաղաքական գործիչներ եւ վերլուծաբաններ գտնում էին, թե ՆԱՏՕ-ն հետխորհրդային դարաշրջանում անելիք չունի այլևս: Սակայն հետագա զարգացումները ժխտեցին նման մոտեցումները:

Ներկայումս ՆԱՏՕ-ի զարգացման երկարաժամկետ հեռանկարն այն է, որպեսզի կազմակերպության շարքերը լայնացվեն ի հաշիվ ոչ եվրոպական երկրների (չնայած նրան, որ համաձայն ՆԱՏՕ-ի գործող կանոնադրության 10-րդ կետի՝ կազմակերպության անդամներ կարող

են լինել միայն եվրոպական երկրները, իսկ 6-րդ կետը սահմանափակումներ է մտցնում ՆԱՏՕ-ի հնարավոր գործողությունների աշխարհագրությունում)¹: Նման մոտեցումը, համաձայն ՆԱՏՕ-ի ստրատեգների, թույլ կտա լուծել ավելի գլոբալ ռազմաքաղաքական խնդիրներ:

Մասնավորապես՝ Ռիգայում կայանալիք ՆԱՏՕ-ի գազաթափողովում պետք է դիտարկվեն Ավստրալիայի, Նոր Զելանդիայի², ինչպես նաև ճապոնիայի³ հետ ավելի սերտ համագործակցելու հարցերը: Քննարկվելու է նաև Վրաստանին վերաբերող խնդիրների համախումբը: Սակայն հայտնի է, որ Գերմանիան եւ Ֆրանսիան (որոնք չեն շտապում բարդացնել իրենց հարաբերությունները Ռուսաստանի հետ) առայսօր դեմ են արտահայտվում ՆԱՏՕ-ին Վրաստանի անդամակցելուն:

Ակնհայտ է, որ լայնամասշտաբ բնույթի խնդիրներն ավելի հրատապ են գլոբալ քաղաքականություն իրագործելու հավակնություններ ունեցող ԱՄՆ-ի եւ Մեծ Բրիտանիայի, բայց ոչ, օրինակ, Գերմանիայի կամ Ֆրանսիայի համար: Այդ իսկ պատճառով քաղաքական, գաղափարական եւ տնտեսական հակասություններն, այսպես կոչված, «ատլանտյան» ու «եվրակենտրոն» կողմնորոշումներ ունեցող ՆԱՏՕ-ի անդամ երկրների միջեւ խորանալու միտում ունեն: Այդ օրինակաբանության

¹ Այս համատեքստում պետք է դիտարկել այն հանգամանքը, որ տեղեկատվական դաշտում երբեմն դիտարկվում են նաև ՆԱՏՕ-Իսրայել համագործակցության խնդիրները: Հատկանշական է, որ վերջին, այսպես կոչված, «լիբանանյան» պատերազմի ընթացքում իսրայելական կողմն առաջարկում էր օգտագործել ՆԱՏՕ-ի ստորաբաժանումները որպես խաղաղապահ ուժեր:

² Ռազմական ոլորտում «հոգեպես մոտիկ» անգլոսաքսոնյան երկրների վրա հենվելն ամերիկյան պաշտոնական քաղաքականության մասն է կազմում: Գործնական հարթությունում այն արտահայտվում է երկրորդ համաշխարհայինից հետո ձեւավորված Պենտագոնի «Ցամաքային ուժերի ստանդարտացման» ծրագրի եւ «ԷՇԵԼՈՆ» գլոբալ ռադիոէլեկտրոնային հետախուզության համակարգի ձեւաչափերի տեսքով, որտեղ ընդգրկված են միայն անգլիախոս երկրները:

³ Որոշ փորձագետներ կարծում են, թե Հյուսիսային Կորեայի միջուկային փորձարկումներն արդյունք են ամերիկյան այն սադրիչ քաղաքականության (դրա մասնավոր արտահայտություններից է այն, որ նախագահ Ջորջ Բուշը բազմիցս Կիմ Չեն Իրին անվանել է «գաճաճ», տվել այլ վիրավորական որակումներ, ինչն այդ տարածաշրջանում համարվում է մահացու վիրավորանք), որի նպատակն էր այդպիսով կենտրոնախույս միտումներ ցուցաբերող ճապոնիային ավելի ամուր «կապել» ԱՄՆ-ի հետ:

արտահայտություններից են Իրաքի, Իրանի հայտնի խնդիրների, ինչպես նաև Ռուսաստանի հետ (հատկապես էներգետիկ ոլորտում) համագործակցության վերաբերյալ տարածայնությունները:

Միեւնույն ժամանակ, ՆԱՏՕ-ն այսօր ավելի ու ավելի ինտենսիվորեն է դառնում այն հիմնական կառույցը, որն ինչ-որ չափով շաղկապում է անգլոսաքսերին ու մայրցամաքային եվրոպացիներին եւ թույլ տալիս նրանց միավորվել ու համատեղ լուծել ռազմաքաղաքական ոլորտում ընդհանուր խնդիրները (օրինակ՝ Ռուսաստանի քաղաքական հավակնությունների սահմանափակման եւ նրա ռեսուրսներին տիրապետելու խնդիրը, Կենտրոնական Ասիայում արեւմտյան ներկայության ապահովման հարցը եւ այլն): Պետք է ընդունել, որ ՆԱՏՕ-ի կարելությունն այդ հարթությունում ընկալում են ոչ միայն ԱՄՆ-ը եւ Մեծ Բրիտանիան, այլեւ «բուն» եվրոպան:

Հայտնի է, որ այսօր Հյուսիսատլանտյան դաշինքի կենսունակությունը որոշակիորեն ապահովվում է նաև Արեւելյան Եվրոպայի երկրների կողմնորոշումներով, որտեղ քաղաքական էլիտաները ձեւավորվել են 90-ականների սկզբներին՝ հիմնականում ամերիկացիների կողմից եւ որոնք ավանդաբար զգուշանում են Ռուսաստանի հզորացումից: Սակայն ակնհայտ է նաև, որ ԱՄՆ վարկանիշի նվազման ներկայիս գործընթացի պահպանման դեպքում (ինչը, ելնելով այսօրվա քաղաքական զարգացումների տրամաբանությունից, ավելի քան հավանական է) վաղ թե ուշ Արեւելյան Եվրոպան ԱՄՆ-ից շրջվելու է դեպի մշակութային առումով իրեն ավելի հոգեհարազատ հարեւանների՝ եվրոպական գերտերություններ Ֆրանսիայի եւ Գերմանիայի, իսկ տնտեսական ոլորտում՝ մասամբ նաև Ռուսաստանի կողմը: Համաձայն որոշ մեկնաբանների՝ այս վերջին գործոնի առումով արդեն առկա են որոշակի միտումներ, որոնք, մասնավորապես, իրենց զգալ տվեցին Հունգարիայում (Բուդապեշտում ծավալված վերջին անկարգությունները երբեմն մեկնաբանվում են որպես հետեւանք այն բանի, որ ներկայիս սոցիալիստական կառավարությունը խորացնում է տնտեսական համագործակցությունը Ռուսաստանի հետ):

Այսպիսով, ՆԱՏՕ-ն այսօր ներկայանում է որպես մի կառույց, որտեղ զուգահեռաբար ընթանում են երկու հակասական գործընթացներ.

❖ ՆԱՏՕ-ն, «լայնացնելով» իր ներկայացուցչական կազմը եւ ազդեցության աշխարհագրությունը, *հզորանում է եւ վերածվում գլոբալ մակարդակի կազմակերպության, որն առայժմ չունի հավասարազոր մրցակիցներ:*

❖ ՆԱՏՕ-ն «խարխլվում» է, քանի որ ներկայիս միաբեւեռ համակարգի կազմալուծմանը համընթաց աճում են այդ կազմակերպության անդամ երկրների միջեւ հակասությունները քաղաքակրթական-գաղափարախոսական եւ քաղաքական-տնտեսական ոլորտներում:

Թե վերոնշյալ միտումներից որը կգերակայի՝ այսօր դժվար է կռահել: Այդ խնդրում որոշիչ գործոն է հանդիսանում ԱՄՆ-ի մենատիրական կարգավիճակի հնարավոր փոխակերպումը:

**ԱՄՆ ԱՐՏԱՔԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ
ՎԵՐԱԻՄԱՍՏԱՎՈՐՈՒՄԸ
Դավիթ Չովհաննիսյան**

2006թ. նոյեմբերի 7-ին ամերիկյան ընտրողները քվեարկեցին ընդդեմ Ջորջ Բուշ կրտսերի: Ընտրությունների արդյունքները հայտարարելուց հետո համաշխարհային մամուլը հեղեղվեց բազմաթիվ վերլուծություններով՝ թե ինչու հանրապետական կուսակցությունը կորցրեց իր առավելությունը միանգամից ե՛լ Սենատում, ե՛լ Կոնգրեսում: Հիմնականում գերիշխում է այն կարծիքը, որ Բուշը պարտվեց Իրաքում սկսած պատերազմի հետեւանքով, որի մեղքը դեմոկրատական կուսակցությունը, իր հնուտ քարոզչության շնորհիվ, կարողացավ բարդել բացառապես հանրապետական վարչակազմի վրա (թեեւ ինքը, հիմնականում, նույնպես կողմ էր արտահայտվել ռազմական գործողությունների դիմելուն):

Երկրորդ հիմնական փաստարկն այն էր, որ Բուշի վարչակազմը քայքայում է ամերիկյան տնտեսությունը: Այս հարցի վերաբերյալ հատկապես կտրուկ էր արտահայտվում Հիլարի Բլինթոնը: Սակայն վերլուծաբաններից շատերը նշում են, որ վիճակագրական տվյալները հակառակն են վկայում: Այսպես. միայն վերջին երեք ամիսների ընթացքում ստեղծվել է 470.000 աշխատատեղ, ընդ որում՝ նոր աշխատատեղեր են բացվել ԱՄՆ 48 նահանգներում, ինչը վկայում է տնտեսության հաստատուն զարգացման մասին, գործազրկությունն իջել է մինչեւ 4,4%, ինչը համարվում է ԱՄՆ պատմության մեջ ամենացածր ցուցանիշներից մեկը, արժեզրկումը կազմում է կայուն 2,7% եւ այլն:

Անշուշտ, ընտրությունների արդյունքների վրա ազդեցին նաեւ մի շարք ազդեցիկ հանրապետականների անվան հետ կապված խայտառակ պատմությունները, որոնք ընտրողների մոտ ստեղծեցին այն պատկերացումը, թե կուսակցության վերնախավն այլասերվել է եւ նրան այլեւս վստահել չի կարելի:

Սակայն իրականում հանրապետական կուսակցության անհաջողության հիմքում ընկած են այլ պատճառներ: Նախեւառաջ այն, որ Ջորջ Բուշ կրտսերի նախագահության ընթացքում բենզինի գինը զգալիորեն աճել է, ինչը հարվածում է հասարակ ընտրողի գրպանին: Այս թանկացումը դեմոկրատների քարոզչությունը կարողացավ կապել հանրապետական

վարչակազմի վարած արտաքին քաղաքականության սնանկության մտքի հետ:

Հաջորդ պատճառն այն է, որ միջազգային ահաբեկչության դեմ հայտարարված պատերազմը հանգստություն եւ ապահովություն չբերեց, քանի որ ահաբեկիչների ծայրահեղ դիցաբանացումը ստեղծեց այնպիսի պատկերացում, որ նրանք անորսալի են, ամենուր են եւ անընդհատ գործում են: Իսկ չարիքի մարմնավորում Ուսամա բեն Լադենը շարունակում է սպառնալ աշխարհին:

Ինչեւէ, այժմ կարելու է հասկանալ, թե արդյոք ԱՄՆ արտաքին քաղաքականությունը փոփոխություններ կկրի եւ եթե այդ միտումը կա, ապա, ընդհանուր առմամբ, ինչ բնույթ կունենան այդ փոփոխությունները:

Կարելի է ենթադրել, որ Սենատում եւ Կոնգրեսում մեծամասնություն ապահոված դեմոկրատական կուսակցությունը, Միացյալ Նահանգների ներկա վարչակազմի վարած արտաքին քաղաքականության դեմ կատաղի քարոզչություն ծավալելուց հետո, պարտավոր է արագորեն ջանքեր գործադրել՝ այդ քաղաքականության մեջ, իր տեսակետից, անհրաժեշտ փոփոխություններ մտցնելու համար: Անհրաժեշտ է հաշվի առնել, որ ամերիկյան երկու գերագույն ներկայացուցչական մարմինների նոր կազմերն իրենց աշխատանքը սկսելու են միայն 2007թ. հունվարի 20-ից: Ամենայն հավանականությամբ, այս ժամանակամիջոցը հանրապետական վարչակազմը ստիպված կլինի օգտագործել իր ընդդիմախոսների հետ որոշ ընդհանուր հայտարարի գալու համար:

Այդ բանակցությունները շատ բարդ են լինելու, որովհետեւ երկու կողմերն էլ հստակ գիտակցում են, որ անցած ընտրությունները նշանակում էին ոչ թե նախընտրական քարոզարշավի ավարտ, այլ միայն սկիզբ 2008թ. ԱՄՆ նոր նախագահի ընտրությունների: Դեմոկրատական մեծամասնությունը ստիպված է լինելու պնդել վարչակազմի արտաքին քաղաքականության ուղորտում իր կողմից արդեն իսկ հայտագրված փոփոխություններն իրականացնելու վրա, ինչը նրան թույլ կտա հաջողության հասնել նաեւ նախագահական ընտրություններում:

Դեմոկրատները շատ լավ լծակներ ունեն այդ փոփոխություններն իրականացնելու համար. նրանք են հատկացնում ֆինանսական միջոցներ վարչակազմի կողմից իրականացվող քաղաքական միջոցառումների համար: Բացի այդ, հանրապետական կուսակցությունն ինքը ստիպված է ազդելու նախագահ Բուշի վրա՝ արտաքին քաղաքականության մեջ որոշակի ուղղումներ մտցնելու նպատակով, քանի որ այս

ընտրությունները հաստատեցին, թե այլապես նրանք որեւէ հույս չեն կարող ունենալ երկրի բարձրագույն պաշտոնին հավակնելու համար: Պաշտպանության նախարար Դոնալդ Ռամսֆելդի հրաժարականը, թերեւս, սրա մասին է վկայում:

Բերված փաստարկները ենթադրում են, որ փոփոխությունները կկատարվեն արագ տեմպով եւ կզուգորդվեն որոշակի ցնցումներով, որոնց մասին ԱՄՆ արտաքին քաղաքականության ոլորտում պատասխանատու պաշտոններ զբաղեցնող մի շարք անձինք արդեն իսկ նախազգուշացնում են:

Նոր արտաքին քաղաքականությունը միտված է լինելու մեղմել վերջին տարիների ընթացքում Ամերիկայի ձեռք բերած տեխասյան կոմբոյի կերպարը եւ դարձնել այն ավելի ընկալելի, որի համար, առաջին հերթին, պետք է կարգավորվեն հարաբերությունները ԱՄՆ եվրոպական դաշնակիցների՝ Ֆրանսիայի եւ Գերմանիայի հետ, ինչպես նաեւ, ընդհանուր առմամբ՝ Եվրամիության հետ: Սա մի կողմից՝ նշանակում է, որ շատ ավելի մեծ դեր է տրվելու ամերիկա-եվրոպական խորհրդակցական մարմիններին, որոնց միջոցով իրականացվելու է քաղաքական եւ տնտեսական որոշումների համաձայնեցումը, մյուս կողմից՝ փորձ է կատարվելու օգտագործել ՆԱՏՕ-ի ինտեգրատիվ հնարավորությունները:

Բացի այդ, նոր արտաքին քաղաքականությունը ձգտելու է վերականգնել ԱՄՆ-ի հեղինակությունը որպես մի երկրի, որը գործում է՝ խուսափելով երկակի ստանդարտներ կիրառելուց, հատկապես ժողովրդավարության եւ մարդու իրավունքների հարցերում, որի համար եվրոպացիները բազմաթիվ մեղադրանքներ են ներկայացրել հանրապետականների վարչակազմին: Այս հանգամանքը որոշակի փոփոխությունների կբերի հատկապես նորանկախ պետությունների իշխանությունների հետ մինչեւ օրս վարած Վաշինգտոնի քաղաքականության մեջ:

Եթե եվրոպական քաղաքականության ուղղությամբ ներկայիս վարչակազմը հաճույքով կհամագործակցի դեմոկրատական մեծամասնության հետ, քանի որ նման օգնության կարիք վաղուց զգում է, ապա բավական բարդ է լինելու վարչակազմի համար համակարգել դեմոկրատների հետ իր՝ Ռուսաստանի նկատմամբ վարվող քաղաքականությունը, քանի որ հատկապես վերջին շրջանում տարբեր ամերիկյան դեմոկրատական հիմնարկներ եւ լրատվամիջոցներ խիստ քննադատության են ենթարկել ռուսական ղեկավարության դիրքորոշումները խոսքի ազատության, ոչ կառավարական կազմակերպությունների, փոքրամասնությունների եւ մի շարք այլ հարցերում: Մյուս կողմից՝

դեմոկրատները նույնպես հայտարարում են, որ Իրանի, միջինարեւելյան իրավիճակի, Չյուսիսային Կորեայի հետ կապված հարցերում անհրաժեշտ է համագործակցել Ռուսաստանի հետ: Այս մոտեցումները կարելի է մեկնաբանել որպես զգույշ եւ դիստանցավորված քաղաքականության նախանշաններ, որտեղ շատ ավելի մեծ ընդգրկվածություն կունենան տնտեսական լծակները եւ տարբեր տիպի քարոզչությունը: Ռուս մեկնաբաններն արդեն իսկ հայտնում են իրենց մտահոգություններն այն մասին, որ Ռուսաստանի մուտքը Առեւտրի համաշխարհային կազմակերպություն կհետաձգվի անորոշ ժամանակով:

Նոր արտաքին քաղաքականությունն ուղղված է լինելու նաեւ ՆԱՏՕ-ի մյուս անդամների հետ հարաբերությունների կարգավորմանը, ինչը, ի թիվս մյուս բաղադրիչների, նշանակելու է նաեւ նոր ամերիկյան նախաձեռնություններ թուրքիայի հետ լարված հարաբերությունների կարգավորման ուղղությամբ: Այս ջանքերը շատ կարելու են Վաշինգտոնի համար, քանի որ Իսրայելը եւ թուրքիան դիտարկվում են որպես միակ տարածաշրջանային ուժեր, որոնք կարող են հակազդել Իրանին: Բացի այդ, դեմոկրատները միշտ էլ ունեցել են այն պատրանքը, որ թուրքիան կարող է առաջնորդել իսլամական աշխարհը՝ հանդես գալով իբրեւ ժողովրդավարական արժեքների վրա հիմնվող եւ աշխարհիկ կառավարման մոդելով իսլամական երկրի օրինակ:

Իրանը շարունակելու է մնալ ամերիկյան արտաքին քաղաքականության հիմնական մտահոգությունը: Արդեն պարզ է, որ Ամերիկան չի կարող դիմել ռազմական գործողությունների Իրանի նկատմամբ այնպես, ինչպես դա արեց Իրաքի հանդեպ: Դեմոկրատական մեծամասնության գործոնի առկայությունն ուժեղացնելու է ամերիկյան քաղաքականության դիվանագիտական բաղադրյալը եւ հնարավոր է դարձնելու իրանա-ամերիկյան ուղղակի երկխոսությունը: Դա թույլ է տալիս ենթադրել, որ հիմնվելով այն փոքր, սակայն շատ կարելու դրական փորձի վրա, որն առաջացավ երկու երկրների՝ Աֆղանստանի հարցում համագործակցելու հետեւանքով, հնարավոր կլինի որոշակիորեն նվազեցնել առկա լարվածությունը եւ գալ փոխհամաձայնության նույնիսկ այնպիսի հարցի շուրջ, ինչպիսին է Իրանի միջուկային ծրագիրը: Խիստ կարելու է, որպեսզի ամերիկյան բարձրաստիճան պաշտոնյաները վերջնականապես համոզվեն, որ նախ՝ Իրանը ներսից չի փլուզվի, եւ ապա՝ որ Իրանը կանխատեսելի քաղաքականություն է վարում եւ կարող է լինել վստահելի բանակցող:

Ամերիկյան միջինարեւելյան քաղաքականության առջեւ կանգնած են եւս երկու չափազանց բարդ խնդիրներ: Առաջինը Իրաքի հիմնա-

հարցն է, որի լուծմանն ուղղված մի քանի սցենար գոյություն ունի: Ներկայումս դժվար է կանխատեսել, թե դրանցից որը կընտրվի իրականացման համար, սակայն հասկանալի է, որ դա հնարավոր կլինի միայն Սպիտակ տան նոր բնակչի անունն իմանալուց հետո: Դժվար է ենթադրել, որ պետքարտուղար Քոնդոլիզա Ռայսը, որը Ռամսֆելդի պաշտոնաթողությունից հետո իրաքյան հիմնահարցի միակ համակարգողն է, կկարողանա հաղթահարել մտածողության իներցիոնությունը եւ սկզբունքորեն նոր լուծումներ կգտնի ծանր իրավիճակից դուրս գալու համար:

Արաբա-իսրայելյան բանակցությունները կվերսկսվեն նույն այն մոտեցումներով, որոնք առկա էին նախագահ Քլինթոնի օրոք: Դրա համար անհրաժեշտ է լինելու ավելի իրատեսորեն գնահատել ներկայումս ստեղծված իրավիճակը՝ հաշվի առնելով, նախեւառաջ, Սիրիայի գործոնը:

Այսպիսով, կարելի է արձանագրել, որ Ամերիկայի Միացյալ Նահանգների արտաքին քաղաքականության մոտեցումներում տեղի են ունենալու սկզբունքային փոփոխություններ, ինչը չափազանց հազվադեպ է տեղի ունեցել այս երկրի պատմության ընթացքում:

**ԷՆԵՐԳԵՏԻԿ ԶԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐ
ՌՈՒՄԱԱՍՏԱՆ – ԵՄ ԶԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ
ՍԵՒԱԿ ՍԱՐՈՒԽԱՆՅԱՆ**

2006թ. հոկտեմբերի 9-ին ռուսական «Գազպրոմ» ընկերության խորհուրդը որոշում ընդունեց սեփական ուժերով, առանց արտասահմանյան ընկերությունների մասնակցության, սկսել գազի արտահանումը Շտոկմանի գազի հանքավայրից: Շտոկմանի հանքավայրը խոշորագույններից է Ռուսաստանի տարածքում, գտնվում է Բարենցի ծովի ռուսական հատվածի շելֆում: Զանքավայրի ընդհանուր պաշարները կազմում են 3,7 տրլն մ³:

«Գազպրոմի» որոշումը կարելի է համարել բեկումնային ռուս-եվրոպական էներգետիկ երկխոսության ոլորտում, եթե հաշվի առնենք մի քանի կարեւոր հանգամանքներ.

❖ «Գազպրոմի»՝ սեփական ուժերով հանքավայրի զարգացման ապահովման մասին որոշումը հակասում է եվրոպական ընկերությունների հետ ձեռք բերված պայմանավորվածություններին: Զամաձայն դրանց՝ «Գազպրոմը» 2005-ի սեպտեմբերին հրապարակել է այն ընկերությունների ցուցակը, ում պատրաստվում էր հրավիրել հանքավայրի զարգացմանը: Դրանք էին նորվեգական «Ստատոյլը» եւ «Յիդրոն», ամերիկյան «Շելրոնն» ու «Կոնոկոֆիլիփսը» եւ ֆրանսիական «Տոտալը»:

❖ «Գազպրոմի» որոշման մեջ հատուկ ուշադրության է արժանի այն փաստը, որ ընկերությունը նպատակահարմար է գտնում Շտոկմանից գազի արտահանումը զազատարների միջոցով: Սա եւս արտառոց որոշում է, քանի որ, ըստ պայմանավորվածության, Շտոկմանի հանքավայրում եվրոպացիների կողմից պետք է կառուցվեր գազի հեղուկացման գործարան (Ռուսաստանն իր սեփական ուժերով տեխնոլոգիապես չի կարող կառուցել նման ձեռնարկություն)¹:

Փաստորեն, «Գազպրոմի» որոշումը եվրոպական ընկերություններին զրկում է հնարավորությունից մասնակցել Ռուսաստանի տարածքում գազի ամենախոստումնալի նոր հանքավայրի զարգացմանը՝ սեփականատիրոջ իրավունքով: Ակնհայտ է, որ նույն եվրոպական ընկերությունները զուտ կապալառուի իրավունքներով կհրավիրվեն հանքավայրի մշակմանը:

ՌԴ–ԵՄ Էներգետիկ երկխոսության ներկայիս փուլը

Ռուս-եվրոպական էներգետիկ երկխոսության գաղափարն առաջին անգամ հայտնվել է 1986թ. եւ հնչեցվել այն ժամանակվա Նիդեռլանդների վարչապետ Ռ.Լյուբերսի կողմից, որն առաջարկում էր ԽՍՀՄ-ն ընդգրկել եվրոպական էներգետիկ համակարգի մեջ: Այս մոտեցման (ինչպես եւ Արեւելյան Եվրոպայի՝ Արեւմուտքին ինտեգրման անհրաժեշտության) արդյունք հանդիսացավ 1991թ. ընդունված *Էներգետիկ խարտիան*, որը ստորագրվեց, սակայն չվավերացվեց Ռուսաստանի կողմից:

Քուն էներգետիկ երկխոսության սկզբի հիմքում ընկած է 1997թ. Ռուսաստանի եւ ԵՄ-ի միջեւ կնքված Գործընկերության եւ համագործակցության մասին համաձայնագիրը:

Էներգետիկ երկխոսության հիմնական նպատակներն են.

ԵՄ-ի համար

Հաշվի առնելով այն, որ ԵՄ-ում էներգիայի օգտագործումն արագ տեմպերով աճում է, իսկ դրան զուգահեռ՝ սպառվում են Հյուսիսային ծովի պաշարները, ԵՄ-ն առավել քան հետաքրքրված է ռուսական էներգակիրների հետագա ստացմամբ: ԵՄ ներկայիս էներգետիկ քաղաքականությունը, ընդհանուր առմամբ, կարելի է բնութագրել որպես՝

1. սեփական միջուկային էլեկտրաէներգիայի եւ նոր էներգետիկ տեխնոլոգիաների ոլորտի զարգացում (արեւային, բիոդիզելային եւ թերմալ),

2. ռուսական ռեսուրսների հետագա օգտագործում, իրանական եւ միջինասիական գազի ԵՄ-ին մատակարարման ապահովում:

Այս տեսանկյունից, Ռուսաստանի դերը ԵՄ-ի համար բավական կարեւոր է, քանզի Ռուսաստանում էներգակիրների արտահանումն ավելանալու է գրեթե նույն այն տեմպերով, որոնցով ավելանալու է էներգակիրների օգտագործումը ԵՄ-ում (*տես աղյուսակը*):

Ռուսաստանում նավթի եւ գազի արտադրության, ԵՄ արտահանման եւ ԵՄ-ում սպառման աճը 2000–2020թթ.²

	ՌԴ-ում արտադրության աճը		ՌԴ–ԵՄ արտահանման աճը		ԵՄ-ում սպառման աճը	
Նավթ	200 մլն տ	60%	32 մլն տ	25%	170 մլն տ	40%
Գազ	150 մլրդ մ ³	25%	31 մլրդ մ ³	23%	300-400 մլրդ մ ³	150-200%

Ներկայումս արդեն ԵՄ մի շարք երկրների կախվածությունը ռուսական գազից բավական նշանակալից է: Այսպես՝ ռուսական գազի չափաբաժինը ներկրվող գազի քանակում կազմում է. Ֆինլանդիա, Սլովակիա՝ 100%, Չեխիա, Ավստրիա, Բուլղարիա, Հունաստան՝ ավելի քան 80%, Հունգարիա՝ 72%, Թուրքիա՝ 65%, Լեհաստան՝ 60%, Գերմանիա՝ 44%, Իտալիա՝ 29%:

Այս թվերից արդեն իսկ ակնհայտ է, որ ռուսական էներգակիրները բավական կարելուր են ԵՄ-ի համար, եւ այս տեսանկյունից հրատապ է դառնում Ռուսաստանի էներգետիկ քաղաքականության անկախության սահմանափակումը, որը եւ կոչված է ապահովելու էներգետիկ խարտիան: ԵՄ-ի համար խարտիայի սկզբունքներից կարելուր են հետեւյալները.

1. ՌԴ-ն չպետք է արգելքներ ստեղծի օտարերկրյա ընկերությունների համար՝ ներդրումներ կատարելու նավթի եւ գազի արտադրության ոլորտում, ինչպես նաեւ սեփական ուժերով կառուցելու խողովակաշարեր՝ ռուսական նավթը եւ գազը ԵՄ արտահանելու համար,

2. ՌԴ-ն զրկվում է ցանկացած իրավունքից կտրել գազի կամ նավթի մատակարարումը՝ կապված այս կամ այն քաղաքական հիմնախնդրի հետ կամ ֆինանսական կարճաժամկետ անհամաձայնությունների պատճառով (եթե Ռուսաստանը վավերացրած լիներ խարտիան, ապա 2005/2006թթ. ձմռանը Ուկրաինայի գազամատակարարման դադարեցումը կլիներ անհնար):

Ռուսաստանի համար

Ռուսաստանի համար բավական կարելուր է պահպանել ԵՄ հիմնական էներգետիկ մատակարարի դերը: Այսօր, օրինակ, ռուսական նավթի արտահանման 78%, գազի արտահանման ավելի քան 60%-ն ընկնում է ԵՄ երկրների վրա: Ռուսական գազի ոչ եվրոպական հեռանկարային գնորդները (խոսքն առաջին հերթին Չինաստանի մասին է) բավարար գնողունակ չեն: Ռուս-չինական վերջին համաձայնագիրը գազատարի կառուցման մասին չի սահմանում Չինաստանին վաճառվելիք ռուսական գազի գինը, որը հետագայում, անկասկած, ավելի ցածր կլինի ԵՄ-ին վաճառվող գազի գնից:

Ռուսաստանի՝ էներգետիկ գերտերության վերածման հեռանկարը կախված է հիմնականում ոչ թե նրանից, թե որքան գազ եւ նավթ է արտադրում նա, այլ նրանից, թե որքանով է Արեւմուտքը կախված

ռուսական նավթից ու գազից: Այս տեսանկյունից, իհարկե, Ռուսաստանի համար կարելու է էներգետիկ երկխոսության զարգացումը ԵՄ-ի հետ:

Սակայն եվրոպական խաղի կանոնները կարծես թե ընդունելի չեն Ռուսաստանի համար: Սա վերաբերում է հենց էներգետիկ խարտիայի հիմնախնդրին, ավելի ճիշտ՝ նրա հավելվածներից մեկին՝ Տրանզիտային արձանագրությանը: Համաձայն այս փաստաթղթի՝ Ռուսաստանը պարտավոր է.

1. Ազատականացնել գազա- եւ նավթատարների ոլորտը եւ թույլ տալ արտասահմանյան ընկերություններին օգտվել դրանցից նույն պայմաններով, որոնցով խողովակաշարերն օգտագործվում են ռուսական ընկերությունների կողմից: Որպես հետեւանք՝ Ռուսաստանը ստիպված կլինի վերացնել պետական «Տրանսնեֆտի» եւ «Գազպրոմի» մենաշնորհը խողովակաշարերի հարցում, որով կվերացվի վերահսկողությունը «նավթային/գազային ընկերություն – եվրոպական սպառող» հարաբերությունների ոլորտում:

2. Զխոչընդոտել երրորդ պետությունների կողմից ռուսական խողովակաշարերի օգտագործմանը՝ ԵՄ նավթ եւ գազ արտահանելու համար, ինչպես նաեւ՝ օտար ընկերություններից գազա- եւ նավթատարների տրանզիտային նպատակներով օգտագործման համար գանձել նույնքան տուրք, որքան սեփական ընկերություններից: Որպես հետեւանք՝ Ռուսաստանը կարող է կորցնել վերահսկողությունը Ղազախստանից, Ուզբեկստանից եւ Ղրղզստանից ԵՄ գազի արտահանման վրա, չնայած այդ արտահանումը կկատարվի բուն ռուսական տարածքով:

Բոլոր այս առանձնահատկությունները ցույց են տալիս, որ ՌԴ–ԵՄ էներգետիկ երկխոսությունը էներգետիկ խարտիայի սահմաններում գրեթե զրկված է որեւէ հեռանկարից:

Վերջին զարգացումները Ռուսաստան–ԵՄ էներգետիկ համագործակցության ոլորտում վկայում են, որ Ռուսաստանը կշարունակի մնալ կարելու մատակարարող ԵՄ էներգակիրների շուկայում, սակայն ՌԴ էներգետիկ քաղաքականությունը կմնա անկախ: Միակ ազդակը, որը կարող է ԵՄ-ի կողմից օգտագործվել ՌԴ-ի վրա ճնշում գործադրելու համար՝ ԵՄ ներդրումների կասեցումն է Ռուսաստանի էներգետիկ ոլորտում: Սակայն «Գազպրոմի» վերջին որոշումը՝ սեփական ուժերով զարգացնել Շտոկհոլմի հանքավայրը, ինչպես նաեւ Սախալին-2-ի հարցի շուրջ ռուսական մոտեցման կարծրացումը, խոսում են այն

մասին, որ Մոսկվայի վրա եվրոպական ներդրումային ազդակները չեն գործում: Իսկ ԵՄ-ը, հաշվի առնելով էներգետիկ կախվածությունը Ռուսաստանից, այս ազդակից զատ, ուրիշ ճնշման միջոց, անգամ մեծ ցանկության դեպքում, չի կարող գործադրել:

¹ Միայն այս գործարանի կառուցման դեպքում Ռուսաստանը հնարավորություն կունենա գազ արտահանել ԱՄՆ: Շտոկհոլմում գազի հեղուկացման գործարանի կառուցումից Ռուսաստանի հրաժարումը խոսում է ռուսական գազային քաղաքականության մեջ «եվրասիական» ռազմավարության հաղթանակի մասին:

² Տվյալներն ըստ *Ռուսաստանի էներգետիկ ռազմավարությունը մինչև 2020թ.* փաստաթղթի:

³ Գերմանիայի, Թուրքիայի, Հունաստանի եւ Իտալիայի կտրվածքով ՌԴ չափաբաժինը էլ ավելի կաճի Հյուսիսեվրոպական եւ Երկնագույն հոսք-2 գազատարների կառուցումից հետո:

**ՌՈՒՍԱՍՏԱՆԸ ՄԵՐՁՎՈՐ ԱՐԵՎԵԼՔՈՒՄ.
ՎԵՐԱԴԱՐՁԻ ՀՈՒՅՍԵՐ
Սուրեն Մանուկյան**

Վերջին մեկ ամսվա ընթացքում ՌԴ մայրաքաղաք Մոսկվա ժամանեցին մերձավորարեւելյան երկու առանցքային երկրների ղեկավարներ՝ Իսրայելի վարչապետ Էհուդ Օլմերտը եւ Եգիպտոսի նախագահ Հոսնի Մուբարաքը: Սա եւս մեկ անգամ առիթ տվեց խոսել այս տարածաշրջանում Ռուսաստանի աճող դերակատարության մասին:

Նահանգ առանց երգի

Սառը պատերազմի ավարտից հետո Արեւելք–Արեւմուտք դիմակայությունը կորցրեց իր սուր բնույթը: ԽՍՀՄ իրավահաջորդը դարձած Ռուսաստանը սկսեց կորցնել Մերձավոր Արեւելքում տարիների ընթացքում ստեղծած իր կապիտալը եւ սեփական քաղաքականության հստակ ուրվագիծը՝ հիմնականում ընդամենը արծազանքելով տեղի ունեցող գործընթացներին: Այս դիպվածային գործողությունները որեւէ էական արդյունք չէին տալիս եւ բերեցին Մոսկվայի հեղինակության ու նշանակության անկմանը տարածաշրջանում: Բացի այդ, Մերձավոր Արեւելքի կարեւորության գիտակցումը նվազել էր նաեւ Ռուսաստանի արտաքին քաղաքական ռազմավարությունը մշակող վերնախավի մոտ: ԱԳ նախարար Ա.Կոզիրեւի պաշտոնավարման շրջանում, դեպի Եվրոպա ձգտող ռուսական արտաքին քաղաքականության պայմաններում, մահմեդական արեւելքն ուղղակի անուշադրության մատնվեց:

Մոսկվան, փաստորեն, հեռացավ մի տարածաշրջանից, որտեղ ուներ հսկայական ենթակառուցվածք, կառուցել էր բազմաթիվ արդյունաբերական օբյեկտներ, ինչպես նաեւ արաբական շատ բանակներ գրեթե ամբողջությամբ զինված էին խորհրդային զենքով, քաղաքական վերնախավը մեծ մասամբ խորհրդային բուհերի շրջանավարտներից էր կազմված:

Կենսական տարածք

Նախագահ Պուտինի իշխանության շրջանում, սակայն, Մոսկվան սկսեց գիտակցել, որ միակողմանի զիջումների քաղաքականությունը կարող է շատ երկար շարունակվել եւ ի վերջո երկրի համար ողբերգական ավարտ ունենալ: Նավթային գների աննախադեպ աճը թույլ տվեց որոշակիորեն վերականգնել սեփական տնտեսությունը եւ ազատվել միջազգային ֆինանսական կառույցների եւ ԱՄՆ կախվածությունից: Սկզբում ԱՊՀ տարածքում, իսկ հետո նաեւ եվրոպական գործերում ՌԴ-ն սկսեց սեփական կարծիք ձեւակերպել եւ հնչեցնել, որը բնավ էլ չէր համապատասխանում Արեւմուտքի կարծիքին:

Տնտեսական հաջողությունները վերականգնեցին նաեւ գաղափարական հիմքերը, եւ ռուսական հասարակությունն ու վերնախավն ավելի հաճախ սկսեցին վերադառնալ կայսերական հռետորաբանությանը եւ աշխարհաքաղաքականությանը:

Այս ամենի համատեքստում՝ հասկանալի է դեպի Մերձավոր Արեւելք, դեպի «Տաք ծովեր» Ռուսաստանի վերադարձի մոտիվների վերակենդանացումը:

Բացի գաղափարական կամ զգացական հիմնավորումներից, Մերձավոր Արեւելքում ռուսական ներկայությունն ունի հստակ գործնական նշանակություն այդ երկրի համար:

1. Նախեւառաջ, միայն Մերձավոր Արեւելքում ներգրավված Ռուսաստանը հնարավորություն ունի վերահսկել զարգացումները պայթյունավտանգ մի տարածաշրջանում, որը մոտ է իր սահմաններին:

2. Մեծաթիվ մահմեդական բնակչություն ունեցող Ռուսաստանի համար չափազանց կարեւոր են հարաբերությունները Մերձավոր Արեւելքի հետ, քանի որ հենց այս տարածաշրջանում են գտնվում մահմեդական սրբավայրերը եւ հենց այստեղ են ծնվում գաղափարներ, որոնք մեծ ազդեցություն են թողնում ամբողջ իսլամական աշխարհի վրա:

3. Այս տարածաշրջանը հսկայական ռազմավարական նշանակություն ունի Ռուսաստանի համար, քանի որ հարուստ է էներգակիրներով, որոնք այսօր մեծ տեղ են զբաղեցնում Մոսկվայի արտաքին քաղաքականության մեջ:

Հատուկ դիրքորոշում

Այս ամենը հաշվի առնելով՝ բնավ էլ զարմանալի չէ այն ակտիվ քաղաքականությունը, որ իրականացնում է Մոսկվան վերջին երկու տարիների ընթացքում:

2005թ. ՌԴ նախագահ Վ.Պուտինը առաջին պաշտոնական այցը կատարեց Մերձավոր Արեւելք (Եգիպտոս, Իսրայել եւ Պաղեստինյան ինքնավարություն): Նույն թվականին ՌԴ-ն ստացավ դիտորդի կարգավիճակ մահմեդական երկրների ամենահեղինակավոր միջազգային կառույցի՝ Իսլամական կոնֆերանս կազմակերպության մեջ:

2006թ. փետրվարին Ռուսաստանի նախագահը զարմացրեց շատերին՝ Մոսկվա հրավիրելով Պաղեստինի ընտրություններում հաղթանակ տարած ՀԱՄԱՍ խմբավորման ղեկավարներին՝ պատճառաբանելով, որ կատարված իրողություն է այն, որ այդ ուժն իշխանության է եկել ազատ, ժողովրդավարական ընտրությունների միջոցով:

Այս տարի ՌԴ նախագահը պաշտոնական այցեր կատարեց եւս մի տարածաշրջան, որն, ըստ էության, Մերձավոր Արեւելքի բաղկացուցիչ մասերից է՝ Հյուսիսային Աֆրիկայի երկրներ՝ Ալժիր եւ Մարոքո:

Միաժամանակ, Ռուսաստանը սկսում է ավելի ակտիվ կերպով հայտնել իր սեփական դիրքորոշումը տարածաշրջանային իրադարձությունների վերաբերյալ:

Իրանի հետ Ռուսաստանը գրեթե չունի հակասություններ: Մեկուսացման մեջ գտնվող Իրանը եւ իր տնտեսական շուկաները կորցրած Ռուսաստանը հետաքրքրված են տարբեր ոլորտներում համագործակցության մեջ: Ռուսների համար Իրանը նաեւ բավական լուրջ զենքի գնորդ է, իսկ Ռուսաստանը Թեհրանի համար ապահով քաղաքական հենարան, որի օժանդակությամբ հնարավոր է խուսափել միջազգային պատժամիջոցներից: Ռուսաստանը դեմ է Իրանի միջուկային ծրագրի պատճառով՝ վերջինիս հանդեպ ՄԱԿ-ի հնարավոր պատժամիջոցներին: Մոսկվան առաջարկում է համոզել Իրանին իրականացնել ուրանի հարստացումը ռուսական տարածքում՝ պատճառաբանելով, որ ՌԴ-ն ունի դրա համար բոլոր հնարավորությունները, եւ բացի այդ՝ ոչ ոք իրավասու չէ որեւէ երկրի գրկել անվտանգ ատոմային էներգիա ունենալու իրավունքից:

Սիրիայի հարցում Ռուսաստանը նույնպես որդեգրել է սեփական մարտավարություն: Այս երկիրը, թերեւս, ՌԴ-ի ամենահավատարիմ դաշնակիցն է տարածաշրջանում: Այստեղ հարաբերությունները նույն-

պես բազմաբովանդակ են: Ռուսաստանն ակտիվորեն զենք է վաճառում Դամասկոսին, ինչն ամերիկյան վարչակարգի անհանգստության եւ դժգոհության առիթ է դառնում: Ավելին, ռուսական մամուլում նույնիսկ լուրեր տարածվեցին այն մասին, որ Ռուսաստանի սեւծովյան նավատորմի մի մասը կարող է ապագայում տեղափոխվել սիրիական Տարթուս նավահանգստում տեղակայված ռազմակայան: Ընդլայնվում է համագործակցությունը տնտեսական մակարդակում: Մոսկվան «Ներեց» Սիրիային 13 մլրդ պարտքի մոտ 10 մլրդ-ն, մնացած մոտ 1,5 մլրդ պարտքը ստանալու է տասը տարվա ընթացքում, իսկ մոտ 1,5 մլրդ-ը վերածելով սիրիական արժույթի՝ ի պահ դրեց սիրիական բանկերում՝ իբրեւ ներդրում կամ միջոցներ սիրիական ապրանքներ գնելու համար: Մոսկվան նաեւ ակտիվ դերակատարություն ունեցավ Լիբանանի նախկին վարչապետ Ռաֆիկ Չարիրիի սպանությունից հետո Դամասկոսին միջազգային պատժամիջոցներից փրկելու գործում:

Պաղեստինը նույնպես այն հնարավորությունն էր, որը թույլ տվեց Մոսկվային ցուցադրաբար չհամաձայնվել ԱՄՆ-ի եւ Եվրոպայի դիրքորոշման հետ եւ փորձել սեփական խաղ վարել: ՀԱՄԱՍ-ը չի համարվում ահաբեկչական կազմակերպություն Մոսկվայի կողմից, եւ երբ միջազգային դիտորդների մասնակցությամբ ընտրությունների արդյունքում այն եկավ իշխանության, Մոսկվան ոչ միայն ճանաչեց նոր կառավարությունը, այլեւ նույնիսկ 10 մլն ֆինանսական աջակցություն ցույց տվեց Պաղեստինյան ինքնավարությանը, այն դեպքում, երբ Եվրամիությունը հրաժարվել էր կատարել ինքնավարության հանդեպ նախկինում ձեռք բերված պարտավորությունները:

Իրաքում «ժողովրդավարության հաստատման» ԱՄՆ վարչակարգի գործողություններն ի սկզբանե Մոսկվան չի պաշտպանել: Սակայն Մոսկվայում գիտակցում են, որ իրաքյան նոր կառավարությունը, վերջնական հաստատումից հետո, կարիք կունենա ԱՄՆ-ին հակակշիռների: Այս պարագայում Ռուսաստանը կարող է վերականգնել իր ավանդական դերն այս երկրում:

Տարածաշրջանի այլ երկրների հետ հարաբերությունները նույնպես զարգանում են չափավոր աստիճանով, եւ փորձ է կատարվում հիմնական շեշտը տեղափոխել տնտեսական համագործակցության ոլորտ: Այս ոլորտում հատկանշական է ռուսական ընկերությունների աճող ակտիվությունը Եգիպտոսում, Սիրիայում, Թուրքիայում եւ Իրանում: Հեռանկարներ կան նաեւ Իսրայելի եւ Իրաքի պարագայում:

Այդ ուղղությամբ բավական կարելու աշխատանք է կատարում Ե.Պրիմակովի նախաձեռնությամբ ստեղծված Ռուս-արաբական գործարար խորհուրդը:

Խոսելով Մերձավոր Արեւելքում ՌԴ քաղաքականության մասին՝ չի կարելի խուսափել *ռուս-ամերիկյան հարաբերությունների* վերլուծությունից: Միացյալ Նահանգներն իրավամբ համարվում է «մերձավորարեւելյան» տերություն, եւ առանց Վաշինգտոնի մասնակցության այստեղ չի լուծվում ոչ մի խնդիր: Ամերիկյան մի շարք փորձագետներ կարծում են, որ Կրեմլի արտաքին քաղաքականությունը չունի երկարաժամկետ ռազմավարություն եւ ընդամենը բաղկացած է ընթացիկ գործընթացների նկատմամբ արձագանքներից: Սա, թերեւս, կարելի է ճիշտ գնահատական համարել Ռուսաստանի արտաքին քաղաքականության նախկին, բայց ոչ այսօրվա փուլի մասին: Իրաքում ամերիկացիների անհաջողությունները ոչ միայն կլանեցին Վաշինգտոնի ուշադրությունը եւ նա բաց թողեց ռուսական ամբիցիաների առաջացման պահը, այլ նաեւ ամրապնդեցին Ռուսաստանի կապերը Իրաքի հարեւանների հետ, որոնց մոտ ԱՄՆ-ի քաղաքականությունը խոր թշնամանք է առաջացրել: Այս պարագայում ՌԴ-ի համար շատ կարելու էր «հեռավորություն պահել» Միացյալ Նահանգներից եւ ընդգծել, որ Մոսկվան այլեւս Վաշինգտոնի կրտսեր գործընկերը չէ: Ամեն դեպքում, Մոսկվան պատրաստ է օգտագործել ԱՄՆ-ի դժվարությունները եւ ըստ Քարնեգի կենտրոնի աշխատակից Դմիտրի Տրենինի՝ «շարունակել նախկին ԽՍՀՄ-ում իրականացված հակահարձակումը» (խոսքը անհնազանդ Ուկրաինայի եւ Վրաստանի նկատմամբ «վառելիքային ճնշման» մասին է):

Չեռանկարներ

Իրականում Ռուսաստանն ունի բավական լավ նախադրյալներ նորից այս տարածաշրջան վերադառնալու համար:

1. Ռուսաստանը կարող է հանդես գալ իբրեւ եվրասիական տերություն եւ կատարելով միջնորդի դերակատարություն՝ հարթել Արեւմուտքի եւ Արեւելքի միջեւ ծագող խնդիրները, որոշակիորեն մեղմելով կողմերի անհաշտությունը:

Չետաքրքիր է, որ այդ դերը Ռուսաստանը ստանում է Եվրոպայից, որը հմուտ կերպով մոտ մեկ տասնամյակ ազնիվ բրոքերի դեր էր կատարում բոլոր հակասություններում՝ Պաղեստինից մինչեւ Իրան:

Ամեն ինչ փոխվեց վերջին երկու տարիների ընթացքում: Ահմադինեժադի Իրանի նախագահ ընտրվելուց եւ ՅԱՄԱՍ-ի հաղթանակից հետո Եվրոպան երկու հարցերում հստակ պաշտպանեց ԱՄՆ-ի դիրքորոշումը, ինչը Ռուսաստանին հնարավորություն ընձեռեց զբաղեցնել նրա տեղը:

2. Ռուսաստանի մտադրությունների լրջության մասին են վկայում նաեւ ակտիվ դերակատարության նրա փորձերը հեռահաղորդակցության ոլորտում: Մոսկվան ներդնում է 35 մլն դոլար արաբալեզու նոր լրատվական գործակալություն ստեղծելու համար: Սա պետք է լինի խորհրդային ավանդույթի վերականգնումը, երբ հսկայական միջոցներ էին ներդրվում արտասահմանում երկրի դրական կերպարի ստեղծման համար: Նոր արբանյակային հեռուստաալիքը փորձելու է վերափոխել միջազգային այլ լրատվամիջոցների կողմից ստեղծված Ռուսաստանի կերպարը: Նոր ալիքի գլխավոր պրոդյուսեր Աքրամ Յուզանը, որը նախկինում «ալ-Ջազիրայի» մոսկովյան գրասենյակի ղեկավարն էր, համոզված է, որ նույնիսկ այս գերլցված շուկայում ռուսական հեռուստաալիքն ունենալու է իր տեղը, քանի որ ներկայացնելու է երկու ծայրահեղությունների արանքում ընկած տեսակետ:

3. Ի հեճուկս ժամանակավոր նահանջի, Ռուսաստանը պահպանում է ավանդական հատուկ հարաբերություններն այն պետությունների հետ, որոնք գաղափարախոսական, տնտեսական եւ այլ պատճառներով շատ մոտ էին ԽՍՀՄ-ին եւ դեռ պահպանում են լավ հիշողություններ՝ կապված հյուսիսային հզոր հարեւանի հետ:

4. Շատ մերձավորարեւելյան պետություններ տնտեսապես այդքան էլ հզոր չեն եւ ունեն տնտեսական օգնության ու ներդրումների կարիք, ինչը հնարավորություն է տալիս ռուսական ընկերություններին ակտիվ դերակատարություն ունենալ այդ երկրների շուկաներում: Տնտեսական ազդեցությունը հնարավոր է նաեւ տարածել՝ խելամիտ կերպով օգտագործելով այդ երկրների Ռուսաստանին ունեցած պետական պարտքի առկայությունը:

5. Տարածաշրջանի մի շարք երկրներում կան ուժեր, որոնք սերտ կապեր ունեն Ռուսաստանի հետ: Խոսքը խորհրդային եւ ռուսական բուհերի շրջանավարտների մասին է, որոնք այսօր բարձր պաշտոններ են զբաղեցնում տարածաշրջանի պետություններում, ինչպես նաեւ բազմաթիվ ռուս կանանց, որոնք ամուսնացած են արաբների հետ, եւ կովկասյան համայնքների, որոնք կան մերձավորարեւելյան շատ երկրներում:

Այսպիսով, Մերձավոր Արեւելք Ռուսաստանի վերադարձի փորձերն ակնհայտ են, սակայն պարզ չէ՝ արդյոք սրանք մտածված եւ մշակված քայլեր են, թե ինքնաբուխ եւ իրավիճակային գործողություններ, որոնք հիմնված են ընդամենը ցանկության վրա:

Առաջին դեպքում այս քաղաքականությունն ունի հեռանկարներ, եթե Մոսկվան կարողանա ապացուցել, որ գոնե առանձին սկզբունքային հարցերում ի վիճակի է Արեւմուտքի համար այլընտրանք լինել եւ շահել մերձավորարեւելյան վերնախավի այն շրջանակի համակրանքը, որը դեմ է միաբեւեռ աշխարհին: Սա հրամայական է, քանի որ Ռուսաստանի հեղինակության հսկայական անկում է տեղի ունեցել երրորդ աշխարհում, իսկ Ռուսաստանի դերակատարությունը, անկախ վերջին ճիգերից, գրեթե աննշան է Մերձավոր Արեւելքում: Մի խումբ երկրներում Ռուսաստանը շարունակում է ունենալ որոշ ազդեցություն՝ Սիրիա, Պաղեստին, Եմեն, Իսրայել, սակայն նույնիսկ այդ երկրներում ռուսական հետաքրքրությունները չեն կարող էականորեն ազդել ընդհանուր զարգացումների վրա: Ինչպես նաեւ, մերձավորարեւելյան հակամարտությունների լուծման պարագայում, Ռուսաստանի դերը զուտ խորհրդանշական է: Մոսկվան առայժմ ոչ մի նոր առաջարկ անել չի կարող եւ ստիպված է բավարարվել միայն արդեն իսկ եղած առաջարկների նկատմամբ վերաբերմունք հայտնելով:

Տարածաշրջան վերադառնալու համար Ռուսաստանին անհրաժեշտ է ոչ միայն վերականգնել նախկին հարաբերությունների ձեւաչափերը, այլ նաեւ կառուցել նախկին դաշնակիցների եւ գործընկերների հետ համագործակցության նոր համակարգ:

Առայժմ Ռուսաստանը հնարավորություն չունի ապահովել տնտեսական այնպիսի ներկայություն, ինչպես նախկինում: Բացի այդ, չպետք է կարծել, որ Ռուսաստանի վերադարձն ընկալվում է բոլորի կողմից դրական կամ գոնե չեզոք կերպով: Խորհրդային վակուումն արդեն լրացվել է արեւմտյան շատ երկրներով, ինչպես նաեւ այս տարածաշրջանում չափազանց ակտիվ գործող Չինաստանով:

ՆԵՐՔԱՂԱՔԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄՆԵՐՆ ԻՐԱՆՈՒՄ

Սարգիս Հարությունյան

Այս տարվա դեկտեմբերի 15-ին Իրանում տեղական ինքնակառավարման մարմինների եւ խորհրդարանի թափուր մնացած տեղերի համար նախատեսված ընտրություններից զատ՝ կայանալու են նաեւ հոկտեմբերից հետաձգված Փորձագետների համաժողովի (ՓՀ) ընտրությունները: ՓՀ-ն այն մարմինն է, որն ընտրում, իսկ անհրաժեշտության դեպքում՝ պաշտոնանկ է անում Իրանի հոգեւոր առաջնորդին՝ իրականացնելով նրա գործունեության ընթացիկ վերահսկողությունը: Թեեւ մինչ այժմ ՓՀ նշված գործառնությունները հիմնականում ունեցել են ձեւական բնույթ, սակայն, հաշվի առնելով 2005թ. հունիսին տեղի ունեցած նախագահական ընտրություններից հետո Իրանում ստեղծված ներքաղաքական նոր իրավիճակը, ՓՀ ընտրությունները կարող են որոշիչ նշանակություն ունենալ իսլամական հանրապետության ներքին զարգացումների համար՝ իրենց ազդեցությունը թողնելով նաեւ Թեհրանի արտաքին քաղաքականության վրա:

Նոր մարդիկ իրանական վերնախավում

Իրանի նախագահ Մահմուդ Ահմադինեժադի ընտրությունից անցել է գրեթե մեկ ու կես տարի: Թե՛ նրա ընտրության փաստը, թե՛ անցած ժամանակահատվածը բնորոշվեցին իրանական իշխող վերնախավում նոր միտումների ի հայտ գալով:

Եթե նախկինում Իրանի ներքաղաքական զարգացումները հիմնականում ընթանում էին պահպանողականների եւ Իրանի նախկին նախագահ Խաթամիի գլխավորած բարեփոխականների միջեւ առկա հակասությունների շուրջ, ապա 2005թ. գարնանից բուն պահպանողական ճամբարում սկսեցին ուրվագծվել երկու թեւեր՝ գերպահպանողականներ (կամ նեոպահպանողականներ) եւ պահպանողականների պրագմատիկ մասը՝ Իրանի նախկին նախագահ Ալի Աքբար Հաշեմի Ռաֆսանջանիի գլխավորությամբ: Տարանջատման գագաթնակետը 2005թ. հունիսին կայացած նախագահական ընտրություններին պահպանողական ճամբարի

երկու առաջատար թեկնածուների առաջքաշումն էր՝ Ռաֆսանջանի, Ահմադինեժադ¹:

Վերջինիս հաղթանակը իրանական վերնախավ բերեց նոր շերտի մարդկանց, ինչն էլ հակասությունների աճի պատճառ հանդիսացավ իրանական վերնախավում:

Ռաֆսանջանին ու նրա միջավայրը, ներկայացնելով պահպանողական թելը, միաժամանակ հանդիսանում են 1979թ. իսլամական հեղափոխությունից հետո ձեւավորված իրանական տնտեսական էլիտայի ազդեցիկ մասը: Իրանում, ուր փորձագիտական վերջին գնահատականների համաձայն՝ տնտեսության մոտ 80%-ը հանդիսանում է պետական սեփականություն, երկար ժամանակ իշխանության ղեկին գտնվելը միայն նպաստել է այդ միջավայրի ֆինանսատնտեսական կարողությունների ընդլայնմանը (Ռաֆսանջանին երկու ժամկետ՝ 1989-1997թթ., եղել է իսլամական հանրապետության նախագահ): 2005թ. հունիսի նախագահական ընտրությունների նախօրեին Ռաֆսանջանին սատարող հիմնական ուժը կապիտալի տեր դարձած պահպանողականների պրագմատիկ մասն էր:

Մյուս կողմից՝ Ահմադինեժադի հաղթանակի արդյունքում իշխանության ղեկին հայտնվեցին մարդիկ, որոնք ոչ միայն խորթ էին նշված միջավայրին, այլև տեր կանգնելով պետական միջոցների՝ ըստ էության, սկսեցին դնել սեփականության վերաբաշխման նպատակներ: Ահմադինեժադի թիմի գաղափարախոսական-քաղաքական կրեդոն դարձավ իսլամական հեղափոխության ակունքներին վերադառնալը: Պատահական չէ, որ Իրանի վեցերորդ նախագահի ձեւավորած կառավարության 21 նախարարներից 18-ը Իսլամական հեղափոխության պահպանների կորպուսի եւ ուժային այլ կառույցների ներկայացուցիչներ էին:

2005թ. օգոստոսից ի վեր, երբ Մահմուդ Ահմադինեժադը ստանձնեց նախագահական պաշտոնը, Իրանի ներքաղաքական զարգացումներում առանցքային դարձան պահպանողական ճամբարի երկու թեւերի միջեւ աստիճանաբար խորացող հակասությունները:

¹ 2005թ. հունիսի նախագահական ընտրություններին պահպանողականների կողմից մասնակցել են նաեւ Իրանի Ազգային անվտանգության բարձրագույն խորհրդի ներկայիս քարտուղար Ալի Լարիջանին եւ Թեհրանի ներկայիս քաղաքապետ Մուհամադ Բադր Քալիբաֆը:

Անցած տարի Իրանի արտաքին գործերի եւ նավթի նոր նախարարների նշանակման, ուժային ուժը կառուցվելու մարդկանց փոխարինման, ինչպես նաեւ արդեն այս տարի հոկտեմբերին Իրանի Կառավարման ու ծրագրավորման կազմակերպության (վերահսկում է Իրանի պետական բյուջեի առաջատար ճյուղերի կատարումը) լուծարման շուրջ առաջ եկած հակասությունները այդ երկու թեւերի միջեւ ընթացող պայքարի երեւացող կողմն էին:

Այաթոլլահ Ալի Խամենեյի գործոնը

2005թ. նախագահական ընտրություններից մոտ երեք ամիս անց՝ հոկտեմբերի սկզբին, Իրանի հոգեւոր առաջնորդ, այաթոլլահ Ալի Խամենեյի որոշմամբ ընդլայնվեցին այդ երկրի ազդեցիկ Նպատակահարմարության խորհրդի (ՆԽ) նախագահ Ռաֆսանջանի իրավասությունները՝ իրանական օրենսդիր, գործադիր ու դատական իշխանությունների նկատմամբ վերահսկողություն իրականացնելու նպատակով:

2005թ. հունիսի նախագահական ընտրություններում պարտություն կրած Ռաֆսանջանի լիազորությունների (ՆԽ նախագահ լինելուց զատ, Ռաֆսանջանին հանդիսանում է նաեւ ՓՅ փոխնախագահ) ընդլայնումը առաջին հերթին նշանակում էր վերջինիս թիմի քաղաքական ազդեցության անկման արգելակում:

Այս տարվա հունիսին Իրանի հոգեւոր առաջնորդն ուշագրավ եւս մեկ փոփոխություն կատարեց Իրանի իշխանական համակարգում: Նրա հրամանագրով ստեղծվեց Արտաքին քաղաքականության ռազմավարական խորհուրդ (ԱՔՌԽ): Թեւեւ վերջինս չունի գործադիր իրավասություններ եւ կրելու է զուտ խորհրդատվական բնույթ, սակայն անմիջականորեն ենթարկվելով Իրանի հոգեւոր առաջնորդին ու, փաստորեն, զբաղվելով արտաքին քաղաքականության ռազմավարական հարցերով՝ ԱՔՌԽ-ն Թեհրանի արտաքին քաղաքական որոշումների մեխանիզմում հանդես է գալու որպես Մահմուդ Ահմադինեժադի վարչակազմի վերահսկողությունից դուրս գտնվող ազդեցիկ մի մարմին: Հատկանշական է, որ ԱՔՌԽ ղեկավար նշանակվեց Իրանի նախորդ նախագահ Մոհամադ Խաթամիի օրոք այդ երկրի արտաքին գործերի գերատեսչությունը ղեկավարած Քամալ Խարազին:

Փաստորեն, այաթոլլահ Ալի Խամենեյի որոշումները միտված էին Իրանի իշխանական համակարգում ամենաազդեցիկ երկու խմբավորում-

ների միջեւ առկա հավասարակշռության պահպանմանը: Այդ առումով, Իրանի հոգեւոր առաջնորդի քայլերը կարող են առաջին հերթին վկայել, որ Ահմադինեժադի ընտրվելուց հետո գերպահպանողական թելի ազդեցության աճը դիտարկվում է որպես մարտահրավեր սեփական իշխանությանը:

Առնչություններն արտաքին քաղաքականության հետ

Ներքաղաքական փոփոխություններն Իրանում իրենց ազդեցությունն ունեցան այդ երկրի արտաքին քաղաքականության վրա:

Իշխանության եկած գերպահպանողականների մեջ բավական լուրջ ներկայացված է այն տեսակետը, թե Իրանը՝ որպես տարածաշրջանում կայսերական ավանդույթներ ունեցող տերություն, պետք է վերադառնա այաթոլլահի խոմեյնիի իսլամական հեղափոխության արտահանման դրույթին՝ Իրանի հարեւան երկրների շիական հատվածների միջոցով ստեղծելով ազդեցության ու պաշտպանիչ նշանակության յուրօրինակ մի շղթա: Գործնականում նման թեզը կարող է նշանակել, որ Արեւմուտքի հետ հարաբերություններում նախեսառաջ հաշվի է առնվում կոնֆրոնտացիոն տրամաբանությունը:

Այդ հանգամանքը հատկապես պարզորոշ երեւում է Իրանի միջուկային խնդրի շուրջ ընթացող զարգացումներում եւ Թեհրանի մերձավորարեւելյան նոր քաղաքականությունում: Պատահական չէ, որ իրանական միջուկային հիմնախնդրի վերաբերյալ եվրոպական երկրների ու ԱՄՆ-ի տարվող բանակցությունների առնչությամբ Իրանի իշխանական համակարգում ամենից կոշտ դիրքորոշումն ունի Ահմադինեժադի թիմը: Մյուս կողմից՝ 2006թ. հուլիս – օգոստոս ամիսներին ծավալված իսրայելա-լիբանանյան պատերազմի արդյունքները Իրանի ներքաղաքական դաշտում ամենից շատ նպաստեցին գերպահպանողականների հեղինակության աճին:

Իրանի նախագահի հայտարարությունները Իսրայելի եւ Չոլոքոստի վերաբերյալ նույնպես վերոհիշյալ տրամաբանության մասն են: Մի կողմից՝ այդ հայտարարությունները ի ցույց են դնում Իրանի նոր քաղաքական ղեկավարության ձգտումը՝ Արեւմուտքի հետ հակամարտության միջոցով հասնել մահմեդական աշխարհում Թեհրանի առաջատար դիրքերին, մյուս կողմից՝ նմանատիպ հայտարարությունների իմաստը պետք է փնտրել ներիրանական զարգացումներում: Պատահական չէ, որ

թե՛ անցած տարի աշնանը եւ թե՛ այս տարի գարնանը Ահմադինեժադի հայտարարությունները քննադատության արժանացան Իրանի նախկին նախագահներ Ռաֆսանջանիի ու Խաթամիի կողմից: Ուշագրավ է, որ վերջիններիս կարծիքները լայնորեն տեղ գտան Իրանի պետական լրատվամիջոցներում, ինչը կարող էր նշանակել այաթոլլահի համեմտեցիկ հավանության ստացում:

Ի տարբերություն գերպահպանողականների, պրագմատիկ թեւը ձգտում է ոչ միայն համագործակցել Եվրոպայի հետ, այլև խնդիր չի տեսնում Միացյալ Նահանգների հետ հարաբերությունների կառուցման առումով: Գաղտնիք չէ, որ Ռաֆսանջանիի թեւը տնտեսական բազմաթիվ կապեր ունի եվրոպական բիզնես-կառույցների հետ²: Նաեւ այս է պատճառը, որ իրանական միջուկային խնդրի շուրջ ընթացող զարգացումներում պրագմատիկները ձգտում են խուսափել Իրանի նկատմամբ տնտեսական պատժամիջոցների կիրառումից:

Չետելություններ

2005թ. նախագահական ընտրությունների արդյունքում Սոհամադ Խաթամիի վարչակազմի անկումը պատճառ հանդիսացավ, որպեսզի նախորդ ավելի քան մեկ տասնամյակում իրանական ներքին քաղաքականության համար առաջնային հանդիսացող պահպանողականներ–բարեփոխականներ պայքարն իր տեղը զիջի պահպանողական ճամբարի մեջ առկա հակասություններին:

2006թ. դեկտեմբերի 15-ին կայանալիք ՓՅ ընտրություններում Մահմուդ Ահմադինեժադի թեւի հաղթանակը եւ, օրինակ, ՓՅ նախագահի պաշտոնում Իրանի նախագահի հոգեւոր ուսուցիչը համարվող այաթոլլահ Սոհամադ Թաքի Միսբահ Յազդիի ընտրվելը միայն նպաստելու են

² Իրանը տնտեսական լուրջ հարաբերություններ է ունեցել նաեւ ամերիկյան կողմի հետ: Օրինակ, 2004թ. հուլիսին հայտնի դարձավ, որ ամերիկյան հանրահայտ «Halliburton» նավթային ընկերության` Կայմանյան կղզիներում գրանցված օֆշորային դուստր ձեռնարկությունը ծանուցագիր է ստացել ներկայանալ ԱՄՆ Տեխաս նահանգի դատարաններից մեկը` 2001-ից Իրանում իր գործունեությանն առնչվող որոշ փաստաթղթեր հանձնելու համար: Մինչ 2001թ. հունվարին ԱՄՆ փոխնախագահ դառնալը, Դիք Չեյնին հանդիսանում էր «Halliburton»-ի գլխավոր գործադիր տնօրենը:

Ահմադինեժադի վարչակազմի կողմից վերջին մոտ մեկ տարվա ընթացքում իրականացվող իսլամական հեղափոխության ակունքներին վերադառնալու քաղաքականության շարունակմանը:

Միաժամանակ, գերպահպանողականների հաղթանակը չի նշանակի սոսկ Ռաֆսանջանիի թեւի էապես թուլացում, այլեւ կարող է հանգեցնել Իրանի հոգեւոր առաջնորդի ազդեցության սահմանափակմանը իրանական ներքին զարգացումներում:

ՓՉ ընտրություններն իրենց անմիջական նշանակությունն են ունենալու նաեւ Իրանի արտաքին քաղաքականության համար: Ընտրություններում գերպահպանողական թեւի հաղթանակը, թերեւս, կնպաստի Թեհրանի արտաքին քաղաքականության կոշտ գծի շարունակմանը:

Մյուս կողմից՝ հատկապես իսրայելա-լիբանանյան վերջին պատերազմից հետո նկատվող ամերիկա-իրանական հարաբերությունների ջերմացումը կարող է նշանակել, թե Վաշինգտոնում, ելնելով տարածաշրջանային նոր իրողություններից, ձգտում են նպաստել իրանական իշխանական համակարգում իրենց համար համեմատաբար ընդունելի ուժերի ամրապնդմանը: Եվ իրանական կողմի պատրաստակամությունը՝ ընդառաջ գնալ ԱՄՆ-ի հետ հարաբերությունների ջերմացմանը (Խաթամիի այցերը Միացյալ Նահանգներ ու Մեծ Բրիտանիա) կարող է վկայել, որ դեկտեմբերյան ընտրությունների արդյունքները լինելու են հավասարակշռված:

ԼԻԲԱՆԱՆԻ ՀԱՅՈՒԹՅՈՒՆԸ
2006-Ի ՊԱՏԵՐԱԶՄԻՑ ՀԵՏՈ
Արաքս Փաշայան

Ժամանակակից լիբանանահայ համայնքը ձևավորվել է գլխավորապես առաջին աշխարհամարտի եւ դրան հաջորդած տարիներին՝ 1915-1939թթ. գաղթականության երեք ալիքների արդյունքում եւ ավանդականորեն համարվել Միջին Արեւելքի ամենաազդեցիկ, հայ հոգեւոր ու մշակութային արժեքներին հավատարիմ համայնքներից մեկը:

Լիբանանահայ գաղութը ներկայացված է Լիբանանի քաղաքական կյանքում՝ խորհրդարանում եւ կառավարության մեջ: Հայերն իրենց թվաքանակով համարվում են Լիբանանի յոթ հիմնական կրոնադավանական համայնքներից մեկը: Նրանք հիմնականում բնակվում են Բեյրութում եւ Այնճար գյուղաքաղաքում:

Լիբանանահայությունն առաջին լուրջ հարվածը կրեց 1975-1989թթ. քաղաքացիական պատերազմի ժամանակ: Միայն «դրական չեզոքության» քաղաքականության շնորհիվ հայ համայնքին հաջողվեց խուսափել առավել մեծ կորուստներից: Սակայն պատերազմի շրջանում լիբանանահայերի մի զգալի հատվածն արտագաղթեց:

Մերձավորարեւելյան հակամարտության եւ տարածաշրջանում Արեւմուտքի ավանդական հետաքրքրությունների ոլորտում գտնվող Լիբանանի համար հերթական փորձությունը կապված էր 2006թ. հուլիս-օգոստոս ամիսներին շիական «Հիզբալլահ» շարժման դեմ Իսրայելի իրականացրած պատերազմի հետ:

Պատերազմի սկզբում «Հիզբալլահի» նկատմամբ Լիբանանի քրիստոնյա որոշ շրջանակների դիրքորոշումը քննադատական էր: Գլխավորապես քրիստոնյա մարոնիները Լիբանանի շիաներին մեղադրեցին երկիրը դժվար իրավիճակի առաջ կանգնեցնելու եւ Իսրայելի հետ առճակատում ստեղծելու համար: Սակայն հետագայում, երբ ակնհայտ էր պատերազմի իրական քաղաքական ենթատեքստը, Լիբանանի էթնոդավանական համայնքներին հաջողվեց զերծ մնալ առճակատումից. նույնիսկ որոշակի համակրանք առաջացավ «Հիզբալլահի» նկատմամբ, որը լիբանանյան բանակի անկարողության համատեքստում փորձում էր պաշտպանել երկիրն արտաքին ագրեսիայից: «Հիզբալլահի» «Ալ-մանար» հեռուստաընկերության տվյալներով՝

լիբանանցիների 63 տոկոսը պատերազմի շրջանում աջակցել է շարժմանը:

Լիբանանահայ շրջանակները (գլխավորապես՝ դաշնակցական) շիա գաղթականներին նյութական եւ բարոյական զգալի աջակցություն ցույց տվեցին՝ պատսպարելով նրանց հայկական կրթօջախներում:

Ճիշտ է, պատերազմից լիբանանահայերը հատուկ չեն տուժել, սակայն նրանք տուժել են այնքան, որքան մնացած լիբանանցիները՝ իրենց վրա զգալով Լիբանանում ստեղծված սոցիալ-տնտեսական ծանր վիճակի հետեւանքները:

Պատերազմից հետո Լիբանանում անցկացված հարցախույզը ցույց տվեց, որ լիբանանցիների մի զգալի հատվածը, հնարավորության դեպքում, կհեռանա երկրից: Լիբանանից արտագաղթողների մեջ մեծ թիվ են կազմում ավանդականորեն ֆրանսախոս եւ արեւմտամետ քրիստոնյա մարոնիները: Գրեթե նույնանման մտայնություններ կան նաեւ լիբանանահայության մեջ: Ոչ պաշտոնական տվյալներով՝ լիբանանահայության ներկայիս թիվը 40-50 հազարի մատույցներում է (նախկինում հայերի թիվը, տարբեր տվյալներով, կազմել է 180-250 հազար):

Մեծահարուստ լիբանանահայերի հիմնական մասը, որպես կանոն, բացի Լիբանանի քաղաքացիությունից, ունի նաեւ Կանադայի, ԱՄՆ-ի կամ եվրոպական որեւէ երկրի հպատակություն: Շատ են հատկապես Կանադայի հպատակություն ունեցողները, ինչը պայմանավորված է այդ երկրի միգրացիոն քաղաքականության դյուրություններով: Այժմ էլ Կանադան, ինչպես նաեւ Հունաստանը, պատրաստ են ընդունել Լիբանանից ներգաղթող քրիստոնյաներին:

2006-ի պատերազմը լիբանանահայերի սոցիալապես ապահով այն շրջանակների համար, ովքեր չունեն սեփականություն դրսում, հրատապ դարձրեց արտերկրում այլընտրանք ունենալու անհրաժեշտությունը, քանի որ լիբանանյան հեռանկարն անորոշ է:

Լիբանանահայերի մեջ մի առանձին շերտ են կազմում ոչ հարուստ շրջանակները, ովքեր չեն հեռանում Լիբանանից կամ այն պատճառով, որ շատ կապված են այդ երկրին, կամ էլ՝ չունեն դրա հնարավորությունը:

2006-ի պատերազմի օրերին արտերկրում (հիմնականում՝ Ամերիկայում) ժամանակավորապես գտնվող լիբանանահայերից շատերը հետ չվերադարձան: Լիբանանից հեռացած եւ հեռացող հայերի ստույգ թիվը հայտնի չէ: Գաղթի իրական պատկերը կարող է առավել տեսանելի դառնալ առաջիկա տարիների ընթացքում:

Լիբանանից (նաեւ Միջին Արեւելքի այլ շրջաններից, հատկապես՝ Հալեպից) Հայաստան ներգաղթելու դեպքեր նույնպես արձանագրվել են: Ներգաղթողները հիմնականում միջին խավի, ինչպես նաեւ հայկական հոգեւոր արժեքների ակունքներում կանգնած մարդիկ են, ովքեր թեւ ունեն Ամերիկայում հաստատվելու հնարավորություն, սակայն գերադասում են, որպեսզի իրենց զավակներն ապրեն հայկական միջավայրում, կրթություն ստանան հայրենիքում:

Այժմ, ըստ ոչ պաշտոնական աղբյուրների, ճամպուրկային տրամադրության մեջ է լիբանանահայերի շուրջ 70 տոկոսը: Նրանց հիմնական մասը պատրաստվում է մեկնել Ամերիկա կամ Եվրոպա:

Լիբանանահայ կյանքի ամենաաշխույժ ոլորտներից է մամուլը: Ներկայումս Բեյրութում հրատարակվում են դաշնակցականների «Ազդակ», ռամկավարների «Զարթոնք» օրաթերթերը, հնչակյանների «Արարատ» շաբաթաթերթը, գրական ուղղվածությամբ «Բագին» եւ «Շիրակ», ինչպես նաեւ «Սփյուռք», «Մարզիկ», «Մասիս», «Արծիվ» եւ այլ ամսագրերը: Չնայած այս փաստին՝ հայ հասարակական-քաղաքական միտքը Լիբանանում ճգնաժամի մեջ է: Լիբանանահայ համայնքի կյանքը շարունակում է շարժվել ավանդական կառույցների ուղեգծով, ինչն աստիճանաբար սպառում է իրեն: Դժվարությունները բխում են նաեւ հստակ կողմնորոշումների բացակայությունից: Համայնքը, որ առանցքային նշանակության խնդիրներ քննարկելու համար չունի կարող մտավորականներ, հանդես է գալիս ըստ իրավիճակի:

Ռամկավարներն ու հնչակյանները Ռաֆիկ Հարիրիի որդու՝ Սաադ Հարիրիի կողմնակիցներն են, իսկ դաշնակցականները հիմնականում կողմնորոշված են դեպի «Հիզբալլահ» եւ գեներալ Միշել Աունի «Ազատ հայրենասիրական շարժում», որը ձգտում է ավելի չեզոք լինել քաղաքական կողմնորոշումների հարցում, ի տարբերություն մարոնիական մեկ այլ՝ «Լիբանանյան ուժեր» արեւմտամետ եւ հակասիրիական դաշինքի, որը ղեկավարում է Սամիր ժաժան, եւ որն ունի կողմնակիցներ նաեւ հայ երիտասարդների շրջանում:

Լիբանանյան համայնքներից յուրաքանչյուրն ավանդականորեն գտնվում է որեւէ ուժային կենտրոնի հետաքրքրության տեսադաշտում. քրիստոնյա մարոնիները՝ Ֆրանսիայի, շիաները՝ Իրանի, սուննիները՝ Սաուդյան Արաբիայի եւ Ծոցի երկրների, դրուզները՝ Մեծ Բրիտանիայի: Այս տեսանկյունից, հայերը չունեն ավանդական դաշնակիցներ, ուստի եւ՝ անվտանգության կայուն երաշխիքներ: Նրանց մտահոգում են մի քանի հարցեր: Դրանցից են անկայուն տարածաշրջանում ապրելու իրողությունը, ինչպես նաեւ Լիբանանում շիական հեռանկարի հարցը:

Այս առումով, թե՛ հայերին եւ թե՛ լիբանանյան մյուս համայնքներին անհանգստացնում է երկրում շիական գործոնի ակտիվացումը՝ չնայած «Յիզբալլահի» քաղաքական վերնախավը բազմիցս հավաստիացրել է, որ Լիբանանում իսլամական պետություն ստեղծելու ծրագիր չունի: Սակայն քրիստոնյաները գիտակցում են, որ ժողովրդագրական առումով ամենաբարձր ցուցանիշ ունեն շիաները, որոնք աչքի են ընկնում համախմբվածությամբ, տոկունությամբ, հայրենասիրության բարձր գիտակցությամբ, վաղվա օրվա նկատմամբ ունեցած լավատեսությամբ: Նրանք իրենց համարում են պատերազմում հաղթած կողմ եւ հանդես են գալիս երկրում քաղաքական ավելի մեծ ներկայացվածություն ունենալու հավակնությամբ:

Ընդհանուր առմամբ, հայերի շրջանում ընկճվածություն եւ հոռետեսություն կա, անվստահություն՝ Լիբանանի վաղվա օրվա նկատմամբ: Արդեն մի քանի պատերազմ տեսած միջին սերնդի հայ մարդու համար Լիբանանն այնքան էլ հեռանկարային չէ կենսագործունեության եւ ազգապահպանության տեսանկյունից:

Սույն հանգամանքները թույլ են տալիս ենթադրել, որ առաջիկա տարիներին հայերի թիվը Լիբանանում զգալիորեն կկրճատվի: Կասկածի տակ է նույնիսկ լիբանանահայ համայնքի շարունակական գոյապահպանությունը: Այս տեսանկյունից, անշուշտ, կարելու է, որպեսզի Լիբանանից հեռացող հայերը ներգաղթեն Յայաստան, ինչը որոշակիորեն կհամալրի հայ ազգաբնակչության թիվը հայրենիքում եւ, վերջապես, կփրկի հայության մի հատվածն անխուսափելի ուժացումից:

ՆՈՐ ՄԵՐՁԱՎՈՐ ԱՐԵՎԵԼՔ **Ռիչարդ Չասս**

Ամերիկյան դարաշրջանի վերջը

Մերձավոր Արեւելքում ամերիկյան դարաշրջանն ավարտվեց: Խաղաղ, ծաղկող, ժողովրդավարական տարածաշրջանի մասին պատկերացումները չիրականացան:

Այս դարաշրջանի ավարտը պայմանավորվեց բազում գործոններով՝ ինչպես կառուցվածքային, այնպես էլ տարերային: Դրանցից ամենանշանակալիցը եղավ 2003թ. Բուշի վարչակազմի Իրաք ներխուժելու որոշումը: Իրաքը դարձավ այդ պատերազմի գոհը, որը ղեկավարվում էր առավելապես սոււննիների կողմից, ուներ բավականաչափ հզորություն ու շահագրգիռ էր, որպեսզի հավասարակշռի շիական Իրանին: Սոււննիների ու շիաների միջեւ ժամանակավորապես մարած լարվածությունը կրկին սրվեց ինչպես Իրաքում, այնպես էլ ողջ տարածաշրջանում: Ահաբեկիչներն Իրաքում ձեռք բերեցին հենակայան եւ սկսեցին մշակել իրենց հետագա էքսպանսիայի ծրագրերը: Գրեթե ողջ տարածաշրջանում ժողովրդավարությունը սկսեց ասոցացվել հասարակական կարգի խախտման ու սոււննիների գերիշխանության ավարտի հետ: Առանց այդ էլ զգալի հակաամերիկյան տրամադրություններն էլ ավելի սաստկացան: Տարածաշրջանում «կապված» է մնացել ամերիկյան զինուժի հսկայական մասը եւ, ընդհանուր առմամբ, այդ պատերազմը թուլացրել է ԱՄՆ ազդեցությունը ողջ աշխարհում: Սա պատմության հեզմանքներից մեկն է. անհրաժեշտությունից ծագած առաջին իրաքյան կամպանիան նշանավորեց Մերձավոր Արեւելքում ամերիկյան դարաշրջանի սկիզբը, իսկ «ընտրությամբ» սկսված երկրորդ պատերազմն Իրաքում արագացրեց այդ դարաշրջանի վախճանը:

Էական նշանակություն ունեն եւ այլ գործոններ: Դրանցից մեկը մերձավորարեւելյան խաղաղ գործընթացի ավարտն է: Միացյալ Նահանգներն ավանդաբար տիրապետել է եւ արաբների, եւ իսրայելցիների հետ աշխատելու բացառիկ կարողության: Սակայն այդ կարողության լիմիտները 2000թ. Քեմպ Դեւիդում սպառվեցին: Այդ պահից Յասիր Արաֆաթի հետնորդների թուլությունը, ՀԱՄԱՍ-ի հզորացումը եւ Իսրայելի խիստ միակողմանի քաղաքականությունը, ավելացրած Բուշի ներկայիս վարչակազմի՝ ակտիվ դիվանագիտություն

վարելու անընդունակությունը, միասնորեն օժանդակեցին Միացյալ Նահանգների հնարավորությունների սահմանափակմանը:

Ամերիկյան դարաշրջանի վախճանին օժանդակող մյուս գործոնը եղավ ավանդական արաբական վարչակարգերի հրաժարումը արմատական իսլամի գրավչությանը հակադրվելուց: Բախվելով օտար ընկալվող ու կոռումպացված քաղաքական գործիչների եւ վառ կրոնական առաջնորդների միջեւ ընտրության անհրաժեշտությանը՝ տարածաշրջանում շատերը գերադասեցին վերջիններիս: Հարկ եղան սեպտեմբերի 11-ի իրադարձությունները, որպեսզի ԱՄՆ առաջնորդները հայտնաբերեին փակ հասարակությունների եւ արմատականների առաջացման միջեւ կապը: Սակայն նրանց ռեակցիան (ներքաղաքական համատեքստը հաշվի չառնող, հաճախ հապճեպ որոշումների կայացման դրդող) ահաբեկիչներին զարգացման ավելի մեծ հնարավորություն ընձեռեց, քան նախկինում էր:

Վերջապես, գլոբալացումը փոխել է տարածաշրջանը: Այսօր արմատականներին հեշտ է ֆինանսավորում, զենք, գաղափարներ ու նոր զորակոչիկներ հայթայթել: Ձանգվածային տեղեկատվության նոր միջոցների եւ, նախեւառաջ, արբանյակային հեռուստատեսության զարգացումն արաբական աշխարհը վերածեց «տարածաշրջանային գյուղի» ու քաղաքականացրեց այն: Առավելապես հեռարձակվում են բռնությունների եւ ավերածությունների տեսարաններ Իրաքում, իրաքցի ու մահմեդական կալանավորների հետ անգութ վերաբերմունքի նկարներ, տառապանքի տեսարաններ Գազայի հատվածից, Հորդանան գետի արեւմտյան ափից, իսկ այժմ էլ՝ նաեւ Լիբանանից: Մերձավոր Արեւելքում այս ամենը շատերին էլ ավելի է հեռացնում Միացյալ Նահանգներից: Արդյունքում, այսօր մերձավորարեւելյան կառավարություններին դժվար է բացահայտորեն համագործակցել Միացյալ Նահանգների հետ, եւ ԱՄՆ ազդեցությունը տարածաշրջանում թուլանում է:

Ինչ է սպասվում

Մերձավոր Արեւելքի նոր դարաշրջանի ուրվագծերը դեռեւս աղոտ են, սակայն բնականորեն բխում են ամերիկյան դարաշրջանի ավարտից: Ըստ այդմ՝

Առաջին. Միացյալ Նահանգները տարածաշրջանում դեռ կունենա մեծ ազդեցություն, քան ցանկացած այլ արտաքին ուժ, բայց այդ ազդեցությունը կթուլանա, ինչպես մի անգամ արդեն տեղի է ունեցել: Դա կհանգեցնի ամերիկյան քաղաքականության փոփոխման:

Երկրորդ. մյուս երկրների արտաքին քաղաքական ուղղությունները հաճախ են մարտահրավեր նետելու Միացյալ Նահանգներին: Եվրոպական միությունն Իրաքին ոչ մեծ օգնություն է առաջարկելու եւ, հավանաբար, պաղեստինյան խնդրի նկատմամբ այլ մոտեցում է դրսևորելու: Չինաստանը դիմակայելու է Իրանի վրա ճնշմանը եւ ձգտելու է երաշխավորել էներգետիկ մատակարարումների մատչելիությունը: Ռուսաստանը նույնպես ընդդիմանալու է Իրանի հանդեպ պատժամիջոցների կիրառմանը եւ փնտրելու է ԱՄՆ-ից իր անկախությունը ցուցադրելու հնարավորություններ: Ե՛վ Չինաստանը, ե՛ւ Ռուսաստանը, ինչպես նաեւ եվրոպական շատ պետություններ հեռու են մնալու Մերձավոր Արեւելքի ոչ ժողովրդավարական պետություններում քաղաքական բարեփոխումների անցկացման ԱՄՆ ջանքերից:

Երրորդ. Իրանը դառնալու է տարածաշրջանի երկու ամենահզոր պետություններից մեկը: Նա, ով կանխատեսել է, թե Իրանը կանգնած է դրամատիկ ներքին փոփոխությունների եզրին, սխալվել է: Իրանը տիրում է հսկայական հարստության, ունի Իրաքի վրա ամենամեծ արտաքին ազդեցությունն ու կառավարում է ե՛ւ ՀԱՄԱՍ-ին, ե՛ւ «Հիզբալլահին»: Այն դասական կայսերական ուժ է, որը մտադրված է վերածել տարածաշրջանն իր պատկերացումներին համապատասխան՝ ունենալով դրան անհրաժեշտ ներուժ:

Չորրորդ. Իսրայելը դառնալու է տարածաշրջանի մյուս հզոր, ժամանակակից տնտեսությամբ պետությունը՝ ընդունակ գլոբալ մրցակցության: Մերձավոր Արեւելքի միջուկային զինանոցով միակ պետությունը տիրում է նաեւ տարածաշրջանի ամենամարտունակ ռազմական ուժին: Սակայն այս պետությունը դեռ կրում է Արեւմտյան ափի օկուպացման ծախսերի լուծը եւ բախվում է սեփական անվտանգության բազմավեկտոր ու բազմապլան սպառնալիքներին: Ռազմավարական տեսանկյունից՝ ներկայումս Իսրայելի դիրքերը թույլ են, քան մինչ լիբանանյան ամառային ճգնաժամը: Եվ, ինչպես Միացյալ Նահանգների դեպքում, նրա վիճակն ավելի կվատթարանա, եթե Իրանը շարունակի միջուկային զենքի մշակումները:

Յինգերորդ. տեսանելի ապագայում որեւէ կենսունակ խաղաղ գործընթացի հավանականությունը փոքր է: Լիբանանում Իսրայելի գործողության վիճելի արդյունքներից հետո, կառավարությունը, «Քադիմա» կուսակցության գլխավորությամբ, չափազանց թույլ կլինի, որպեսզի պահանջի ներպետական աջակցություն որեւէ քաղաքականության համար: Պաղեստինյան կողմում ակնհայտորեն չկա որեւէ մեկը, որը կարող է կամ ցանկանում է գնալ փոխզիջման, եւ այնտեղ շարունակում են արգելակել խնդրի խաղաղ լուծման հնարավորու-

թյունը: Միացյալ Նահանգները, համենայնդեպս, ներկայումս կորցրել է հուսալի եւ արդար միջնորդի իր համբավի մեծ մասը: Միեւնույն ժամանակ, բնակավայրերի խորայելական էքսպանսիան ու ճանապարհաշինությունը սրընթաց կերպով շարունակվում են՝ առավել բարդացնելով դիվանագիտական բանակցությունները:

Վեցերորդ. Իրաքը երկար տարիներ գտնվելու է քառսի մեջ՝ տառապելով կենտրոնական կառավարության թուլությունից, հասարակության տարանջատվածությունից եւ դավանական հողի վրա բռնության պարբերական պռթկումներից: Վատագույն դեպքում, այն, որպես պետություն, չի կայանա՝ խորտակվելով համընդհանուր քաղաքացիական պատերազմի արդյունքում, որում կներգրավվեն նաեւ նրա հարեւանները:

Յոթերորդ. նավթի նկատմամբ Չինաստանի ու Յնդկաստանի մեծ պահանջարկի, Միացյալ Նահանգներում դրա սպառումը նվազեցնելու սահմանափակ հաջողության պատճառով նավթի գները կմնան բարձր: Նավթի մեկ բարելի գինը, թերեւս, գերազանցի 100 դոլարի նշագիծը, քան կիջնի մինչեւ 40 դոլար: Իրանը, Սաուդյան Արաբիան եւ մյուս խոշոր արտադրողներն անչափելի կհարստանան:

Ութերորդ. շեշտակիորեն շարունակվում է «ռազմականացման» գործընթացը: Իրաքում, Լիբանանում եւ Պաղեստինում այժմ արդեն զորեղանում են մասնավոր ռազմական խմբավորումները: Զինված ջոկատները, հանդիսանալով պետության թուլության եւ արդյունք, եւ պատճառ, հայտնվում են ամենուրեք, որտեղ առկա է պետական իշխանության եւ իրավասության շոշափելի կամ փաստացի պակաս:

Լիբանանի վերջին պատերազմը կսաստկացնի այդ միտումները, քանզի «Հիզբալլահը», չկրելով տոտալ պարտություն, հաղթեց, մինչդեռ Իսրայելը, չհասնելով լիակատար հաղթանակի, պարտվեց. արդյունք, որը կարող է քաջալերել «Հիզբալլահին» ու նրանց, ովքեր նրան պաշտպանում են:

Իններորդ. ահաբեկչությունը մնալու է տարածաշրջանի առանձնահատկությունը: Այն կհանդիպի մեկուսի հասարակություններում, ինչպիսին Իրաքն է, հասարակություններում, որտեղ արմատական խմբերը ձգտում են թուլացնել եւ վարկաբեկել կառավարություններին, ինչպիսին Սաուդյան Արաբիան ու Եգիպտոսն են: Ահաբեկչությունը կընդլայնվի՝ մնալով որպես Իսրայելի ու տարածաշրջանում Միացյալ Նահանգների (եւ այլ արտաքին ուժերի) ներկայության դեմ օգտագործվող զենք:

Տասներորդ. իսլամը լրացնելու է արաբական աշխարհում առկա քաղաքական ու ինտելեկտուալ վակուումը եւ տարածաշրջանի

բնակչության մեծ մասի համար ապահովելու է քաղաքական գործունեության հիմք: Արաբական ազգայնականությունն ու արաբական սոցիալիզմն անցյալի հասկացություններ են, իսկ ժողովրդավարությունը, լավագույն դեպքում, առնչվում է հեռավոր ապագային: Արաբական միասնությունը կարգախոս է, այլ ոչ իրականություն: Իրանի եւ նրա հետ կապված խմբերի ազդեցությունն ամրանալու է, իսկ արաբական կառավարությունների եւ Իսրայելի ու Միացյալ Նահանգների միջև կապերի ամրապնդմանն ուղղված ջանքերը դժվարանալու են: Ընդ որում, սուսնիների եւ շիաների միջև լարվածությունը կաճի ողջ Մերձավոր Արեւելքում՝ խնդիրներ առաջացնելով այն երկրներում, որտեղ հասարակությունը կրոնական հատկանիշներով տարանջատված է (Բահրեյն, Լիբանան եւ Սաուդյան Արաբիա):

Տասնմեկերորդ. արաբական վարչակարգերն, ամենայն հավանականությամբ, կմնան ավտորիտար եւ կլինեն հակաամերիկանիստ ու կրոնական տեսանկյունից առավել անհանդուրժողական: Առաջատարներ կմնան երկու պետություններ՝ Եգիպտոսը եւ Սաուդյան Արաբիան: Եգիպտոսը, որի կազմում է ողջ արաբական աշխարհի բնակչության մեկ երրորդը, ներդրեց որոշ տնտեսական կառուցողական բարեփոխումներ: Սակայն նրա քաղաքական գործիչներն անկարող եղան շարունակել դրանք: Ընդհակառակը, այնտեղ կառավարող վարչակարգը երկրի սակավաթիվ ազատականներին ճնշելու եւ եգիպտացիներին ավանդական ավտորիտարիզմի ու մոսուլմանական եղբայրության միջև ընտրություն առաջարկելու վճռականություն է դրսևորում: Վտանգն այն է, որ մի գեղեցիկ օր եգիպտացիները կնախընտրեն վերջինը. ոչ այն պատճառով, թե դա իրոք իրենց ձեռնտու է, այլ որովհետեւ հոգնել են նախկին կյանքից: Որպես այլընտրանք, վարչակարգը կարող է օգտագործել իր իսլամական ընդդիմախոսների ընտրանուն՝ ինքը համալրելով նրանց կոչերը, ընդ որում, հեռավորություն պահելով Միացյալ Նահանգներից: Սաուդյան Արաբիայում կառավարությունն ու թագավորական վերնախավն էներգակիրների վաճառքից ստացված գերշահույթներն օգտագործում են փոփոխությունների ներքին կոչերը մեղմելու համար: Խնդիրն այն է, որ ճնշումների մեծ մասը, որին նրանք արձագանքում են, ելնում է ոչ թե ձախ ազատականներից, այլ աջ կրոնականներից, որոնք ստիպեցին նրանց օրակարգ մտցնել կրոնական իշխանության հարցը:

Վերջապես, տարածաշրջանային հաստատությունները կմնան չզարգացած՝ էապես հետ մնալով մյուս երկրներից: Մերձավոր Արեւելքի ամենահայտնի կազմակերպությունը՝ Արաբական պետությունների լիգան, իր շարքերը չի թողնում տարածաշրջանային երկու ամենահզոր

պետություններին՝ Իսրայելին եւ Իրանին: Արաբա-իսրայելյան տեւական հակամարտությունն այսուհետեւ էլ կխոչընդոտի ցանկացած տարածաշրջանային երկարատեւ հարաբերություններում Իսրայելի մասնակցությամբ: Իրանի եւ արաբական պետությունների մեծ մասի միջեւ լարվածությունը եւս կխոչընդոտի տարածաշրջանային քաղաքականության ձեւավորմանը: Մերձավոր Արեւելքի ներսում առեւտուրը կմնա չափավոր, քանզի փոքրաթիվ երկրներ են առաջարկում ապրանքներ ու ծառայություններ, որոնք մեծ քանակով կցանկանային ձեռք բերել նյութերը, եւ ժամանակակից արդյունաբերական ապրանքները կստացվեն այլ երկրներից: Գլոբալ տնտեսական ինտեգրացիայի առավելություններից քչերը «կհասնեն» աշխարհի այս հատվածը՝ չնայած դրանց նկատմամբ կենսական պահանջմունքին:

***Foreign Affairs,
նոյեմբեր/դեկտեմբեր, 2006թ.***

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

Մարիամ Մարգարյան ՊԱՅՊԱՆՈՂԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ	1
Սուրեն Սարյան ՊԱՅՊԱՆՈՂԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՆՈՐ ՎԵՐԵԼՔԸ ԵՎՐՈՊԱՅՈՒՄ	9
Գագիկ Տեր-Հարությունյան ՆԱՏՕ-Ի ԳՈՐԾՈՆԸ	15
Դավիթ Հովհաննիսյան ԱՄՆ ԱՐՏԱՔԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԻՄԱՍՏԱՎՈՐՈՒՄԸ	20
Սեւակ Սարուխանյան ԷՆԵՐԳԵՏԻԿ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐ ՈՒՄԱՍՏԱՆ–ԵՄ ՀԱՐԱՔԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ	25
Սուրեն Մանուկյան ՈՒՄԱՍՏԱՆԸ ՄԵՐՋԱՎՈՐ ԱՐԵՎԵԼՔՈՒՄ. ՎԵՐԱԴԱՐՁԻ ՀՈՒՅՍԵՐ	30
Սարգիս Հարությունյան ՆԵՐՔԱՂԱՔԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄՆԵՐՆ ԻՐԱՆՈՒՄ	37
Արաքս Փաշայան ԼԻՔԱՆԱՆԻ ՀԱՅՈՒԹՅՈՒՆԸ 2006-Ի ՊԱՏԵՐԱԶՄԻՑ ՀԵՏՈ	43
Ռիչարդ Հասս ՆՈՐ ՄԵՐՋԱՎՈՐ ԱՐԵՎԵԼՔ	47

*Շապիկի վրա պատկերված են
Արաքս գետը եւ Երասխաձորը՝
Կաղզվան – Կողբ ծանապարհից*

«ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ», Հայաստանի
Հանրապետական կուսակցության հրատարակություն
Խմբագրական խորհուրդ
Երեւան, 375010, Մելիք-Ադամյան 2: Հեռ. 58 04 91, 58 04 83:
Էլ. փոստ՝ hanrapetakan@hhk.am:
Հիմնադիր՝ Հայաստանի Հանրապետական կուսակցություն:

Թուղթը՝ օֆսեթ, ֆորմատը՝ 70×108 1/16:
Պայմանական 4 մամուլ: Տպաքանակը՝ 1000:
Տառատեսակը՝ «Arial Armenian» եւ «Vs Helvetica»:
Վկայական՝ Օ1Մ 000176:
Տպագրվել է «Ամարաս» տպարանում: